Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՓԱՐ

8-9(611-612)
23.04.2021
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՅԱՍՈՒՄԻ ՄՌՆՉՅՈՒՆԻՑ՝ ԻՐԱԿԱՆ ՀԱՂԹԱԿԱՆՉ

Պատերազմները արհավիրքներ բերելուց զատ նաև ուսուցանում են: Ծանր է պատերազմի դասը, անշուշտ, բայց ոչինչ չես կարող անել, հատկապես եթե այն թշնամու կողմից պարտադրված է: Մի սերնդին քանի՞ պատերազմ է բաժին հասնում. կոմունիստական գաղափարաբանությունը երբևէ փորձում էր հանրություններին համոզել, որ պետությունները կարող են նաև առանց պատերազմների լուծել առկա հակասությունները: Սակայն դա ընդամենը համայնավարական ինքնախաբեություն էր: Չին պետական-կուսակցական հանրահայտ գործիչ Մաո Ցզե Դունն էր, կարծեք, ժամանակին ասել, որ ամեն մի սերունդ պարտադիր կերպով տեսնում է իր բաժին պատերազմը:

Գուցե նրա հռչակած թեզի մեջ իսկապես ռացիոնալ հատիկ կա, թեպետ հայ ժողովրդի պարագայում տվյալ «օրինաչափությունն» ակնհայտորեն խախտված է: Վերջին երեք տասնամյակում մեզ մոտ միևնույն սերունդն առնվազն երեք անգամ պատերազմ է տեսել: Ասում ենք՝ առնվազն, որովհետև տարեց սերնդի մի մասը նաև Երկրորդ աշխարհամարտի ականատեսն է եղել:

Ի՞նչ հետևություններ ենք անում, սակայն, ամեն անգամ նոր պատերազմ վերապրելուց: Հայտնի ճշմարտություն է՝ եթե խաղաղություն ես ուզում, պատրաստվիր պատերազմի: Ընդունելով շեշտումը՝ այնուամենայնիվ, ինքնաքննադատորեն խոստովանենք, որ մենք ճիշտ չենք նախապատրաստվում հերթական պատերազմին: Երկիր մոլորակի վրա թերևս քիչ չեն ազգերը, որոնք ապրելով հարևանության մեջ, մշտապես թշնամաբար են տրամադրված իրար հանդեպ, բայց հայի ու թուրքի էպոխալ թշնամությունը մի առանձնահատկություն ունի՝ թուրքը չի հանդուրժում հայի գոյությունն առհասարակ, նրա գերնպատակն իր քրիստոնյա հարևանի ֆիզիկական ոչնչացումն է բառի ուղիղ իմաստով: Այդպես եղավ 1915-1923 թվականներին Արևմտյան Հայաստանում, 1988-1992-ին՝ Ադրբեջանում, 2020-ին՝ արդեն բուն Արցախում:

Դաս չառա՞նք այս փորձություններից… Միամտորեն հույսներս դնում ենք օտարի բարեգթության վրա՝ հավատալով, որ կմիջամտեն ու թույլ չեն տա համաշխարհային քաղաքակրթություն կերտած բիբլիական հայության ոչնչացումը բարբարոսների կողմից: Անցյալ տարվա աշնանը Արցախի Հանրապետության դեմ բազմազգ ուժերով սանձազերծված աղետալի պատերազմի ժամանակ ո՞վ բռնեց անարգ ոսոխի ձեռքը, ո՞վ խանգարեց իսլամական կոալիցիային հայրենազրկելու մեր հազարավոր հայրենակիցներին… Հերի՛ք է պատրանքներով սնվենք, մեր փրկությունը դարձյալ ու կրկին մեր հավաքական ուժի մեջ է: Եթե պարտվել ենք, ուրեմն ճեղք է տվել համազգային միասնությունը, այլ պատճառներ պետք չէ փնտրել:

Եղեռնազարկ մեր հայրենակիցների հուշաքարերին ամեն անգամ խոնարհվելուց հետո արագորեն ուղղենք մեր մեջքը, շիտակ նայենք ապրողներիս աչքերին և ուս ուսի տված՝ պինդ կանգնենք այս ծվատված-վիրավոր հողի վրա: Եվ մեր ցասումի մռնչյունն անպայման կվերածվի իրական հաղթականչի:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԹԵՎԵՐԸ ԲԱՑՎՈՒՄ ԵՆ ԹՌՉԵԼԻՍ…

Նա դեռ արծվի ճուտ է, և նրա թռիչքն առայժմ պար է հաղթական, բայց երբ մեծանա, ու թևերը հզորանան, անպայման կսավառնի դեպի հայոց բարձունքներ՝ Մռով, Նեմրութ, Արարատ: Կգնա՝ գերությունից ազատելու մեր սրբալեռները…

ՍԿՍՎԱԾ ԵՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

Ապրիլի 19-ին Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցում տրվեց ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախաձեռնած հոգեբանամանկավարժական աջակցության 5-օրյա դասընթացների մեկնարկը: Մասնակցում են մայրաքաղաքի և շրջանների մանկապարտեզների ու հանրակրթական դպրոցների, Ստեփանակերտի վերականգնողական կենտրոնի մասնագետները՝ հոգեբան, լոգոպեդ, հատուկ մանկավարժ՝ շուրջ 70 հոգի, ինչպես նաև դասվարներ, որոնք աշխատում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ:

Ողջունելով մասնակիցներին՝ ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանն ասաց, որ սկսվել է ուսուցիչների ինտենսիվ վերապատրաստման շրջան: Այս մեկը պլանավորված էր մինչև պատերազմը, սակայն հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ չստացվեց իրականացնել: Այսուհետ պարբերաբար վերապատրաստումներ կկազմակերպվեն տարբեր մասնագետների համար: «Մենք պետք է շատ ուժեղանանք գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերման հարցում: Ռեստարտ ենք անում յուրաքանչյուրս մեր ոլորտում, նոր կյանք ենք սկսում մեր երկրում, մեր գործունեությամբ, կենսակերպով, վարքագծով պետք է ապացուցենք մեր նվիրվածությունը»,- ասաց նա:

Դասընթացները վարում են Երևանից և ՀՀ մարզերի՝ տարիների աշխատանքային փորձ ունեցող պրակտիկ մասնագետներ: Խմբի ղեկավար՝ ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի անդամ, հոգեբան Սոֆյա Հովսեփյանն ասաց, որ ներկա դասընթացներն անցկացվելու են «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացում և ներառում» թեմայով: Հետագայում կանցկացվեն հետպատերազմյան տրավմաների հաղթահարման ուղղությամբ:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՈԼՈՐՏԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻ

Ապրիլի 15-ին ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ պարգևատրման արարողություն: Ոլորտի մի խումբ երախտավորներ ԱՀ նախագահի հրամանագրով արժանացել են պատվավոր կոչումների և պարգևների: Նախարար Լուսինե Ղարախանյանը ներկաներին նախ շնորհավորեց Մշակույթի միջազգային օրվա առթիվ, որը սահմանվել է 1935թ. ապրիլի 15-ին Պատմական հուշարձանների պահպանության, գեղարվեստական ու գիտական հաստատությունների պահպանման մասին դաշնագրով: Այդ կապակցությամբ Լ. Ղարախանյանը նաև տեսաուղերձ է հղել, որում մասնավորապես ասվում է. «Այսօրվա հեղաբեկումներում ևս մշակույթը շարունակում է մնալ մեր ազգային դիմադրողականությունը և մեր գերնպատակը: Աշխարհաքաղաքական զարգացումների այսօրվա համապատկերին, երբ Վահան Տերյանի բառերով ասած՝ աշխարհը վառող է շնչում, հարևան Ադրբեջանը շարունակում է ամեն օր մի տհաճ անակնկալ մատուցել. պատմական հուշարձանների ոչնչացումից մինչև ռազմական ավարով պուրակ ստեղծելը, որն արվել է ամենաանմարդկային, ամենաստոր, ամենավայրենի ու բարբարոս դրսևորումներով: Պատերազմի, խաղաղության, պայքարի մեր լեզուն եղել և մնում է հոգևոր ու մշակութային ինքնության ամբողջականության պահպանումը: Այո, մենք պետք է զորենք նաև մշակույթով և ոչ միայն պահանջատիրությամբ, որի հետևում մենք հաճախ պատսպարվում ենք, այլ արժանապատիվ ինքնահաստատմամբ և բարձր ստեղծագործականությամբ:

Մեր մտավորականներով, արվեստագետներով, մշակույթի գործիչներով, բոլորիս ջանքերի գերլարումով պետք է պահենք ու պահպանենք մեր մշակութային ժառանգությունը»:

ԱՀ նախագահի հրամանագրով «Վաչագան Բարեպաշտ» մեդալով պարգևատրվել է Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գրական-գեղարվեստական մասի վարիչ, թատերագետ, ԼՂՀ մշակույթի վաստակավոր գործիչ Կարինե Ալավերդյանը թատերագիտության բնագավառում ունեցած ավանդի համար: Վերջերս նա հրատարակել է 89-ամյա մեր թատրոնի տարեգրությունն ամփոփող գիրք: «Մենք շատ դժվար ժամանակներ ենք ապրում, բայց թույլ չպիտի տանք, որ պատուհասած արհավիրքը հոգեպես անդամալույծ դարձնի մեզ: Իսկ այս իրավիճակից դուրս գալու մի եղանակ կա՝ ապրել, աշխատել, արարել, ստեղծագործել՝ ի հեճուկս մահվան, ի հեճուկս մեր թշնամիների»,- իր երախտագիտության խոսքում ասաց Կ. Ալավերդյանը:

ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման է արժանացել Ստեփանակերտի Թամարա Քամալյանի անվան պետական բժշկական քոլեջի երկարամյա փոխտնօրեն Վալենտինա Հարությունյանը: Մեկ տարի հետո կրթական այս հաստատությունը կնշի իր 90-ամյակը, որի տարիների լավագույն փորձն ու ավանդույթները սերունդներին փոխանցելու գործում իր արժանի ավանդն ունի նրա նախկին սանը, որն այսպես արտահայտվեց. «Երախտապարտ եմ ինձ բոլոր դասավանդածներին և իմ գործընկերներին: Իմ գնահատականը թիմային աշխատանքի արդյունք է: Մենք պատրաստում ենք բուժաշխատողներ: Բոլորդ տեսաք ինչքան զոհեր ունեցանք, որոնք նաև մեր շրջանավարտներից էին: Թող այլևս պատերազմ չլինի, և բուժաշխատողի աշխատանքը լինի միայն խաղաղ պայմաններում»:

Սպորտի ոլորտը մեծ կորուստներ է ունեցել այս պատերազմում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման գործում ունեցած ավանդի համար ԼՂՀ վաստակավոր մարզչի պատվավոր կոչման արժանացած՝ հանրապետական մանկապատանեական մարզադպրոցի մեթոդիստ Արկադի Հակոբյանը, որը յոթ տարեկանից սպորտի ասպարեզում է՝ որպես սպորտսմեն, ապա՝ մարզիչ, իր պարտքը համարեց առավել մեծ ջանքերով նպաստել արցախյան սպորտի զարգացմանը:

Պատմագիտության բնագավառում և մանկավարժական կադրերի պատրաստման գործում ունեցած ավանդի համար «Վաչագան Բարեպաշտ» մեդալի է արժանացել ԱրՊՀ պատմության ամբիոնի դասախոս Վարդգես Սաֆարյանը, որի պարգևը կհանձնվի բուհի գիտխորհրդի նիստում:

Սեփ. լրատվություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ապրիլի 1-ին տեղի ունեցավ Արցախի պետական համալսարանի խորհրդի նիստը, որտեղ լսվեց 2019-2020 ուսումնական տարում կատարված աշխատանքների մասին հաշվետվությունը: Նիստը բացեց ԱրՊՀ խորհրդի նախագահ, պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը: Ներկաները նախ մեկ րոպե լռությամբ հարգեցին 44-օրյա պատերազմի ժամանակ զոհված հայորդիների հիշատակը, որոնց թվում կան նաև ԱրՊՀ ուսանողներ:

Հաշվետու տարում բուհում կատարված աշխատանքների մասին հանդես եկավ ռեկտոր Արմեն Սարգսյանը: 2019-2020 ուսումնականը ԱրՊՀ-ի համար ծանրագույն փորձության տարի էր: Տարեսկիզբը սկսվեց համավարակով, և ուսումնական գործընթացի անընդհատությունն ապահովելու նպատակով անցում կատարվեց նոր ձևաչափի՝ հեռավար կրթության:

Շնորհիվ համալսարանի ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության համատեղ աշխատանքի ու հետևողական ջանքերի, հաջողվեց գործընթացը կազմակերպել և իրականացնել՝ պահպանելով ակադեմիական սկզբունքներն ու արժեքները:

Մեզ պարտադրված ծանր պատերազմը մի նոր փորձություն դարձավ, համալսարանն ունեցավ զոհեր և վիրավորներ, շատերն էլ այսօր շարունակում են ծառայել հայրենիքին: «Այսօր փորձում ենք շարունակել ապրել, աշխատել ու նայել առաջ, քանզի միայն աշխատանքով, նվիրումով է հնարավոր շարունակել ապրել, հաղթահարել ծանր կորուստների հսկայական բեռն ու պահպանել լավատեսությունը»,- ռեկտորը փոխանցեց կոլեկտիվի տրամադրությունը:

Ա. Սարգսյանը թվարկեց կատարված արդյունավետ աշխատանքները ուսումնական գործընթացի բարելավման, կրթության բովանդակության հարստացման, դասավանդման որակի բարձրացման, մեթոդների արդիականացման և այլ ուղղություններով, չնայած բազմաթիվ խնդիրներին:

Համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման ուղղությամբ կատարվել են զգալի աշխատանքներ:

Իրականացվել են մասնագիտական կրթական ծրագրերի վերլուծություն ու արդիականացում, հաստատվել են նորերը:

Արցախի մայր բուհը մասնագետներ է պատրաստել բակալավրիատի 38 ու մագիստրատուրայի 24 կրթական ծրագրերով 5 ֆակուլտետի և 16 ամբիոնի միջոցով, որտեղ դասավանդել է 175 հիմնական դասախոս, որից՝ 12 պրոֆեսոր, 69 դոցենտ, 47 ավագ դասախոս, 39 դասախոս, 8 ասիստենտ: Ժամավճարային հիմունքներով դասավանդել է 110 դասախոս:

2019-2020 ուսումնական տարում բակալավրիատի ուսանողների թիվը առկա և հեռակա ուսուցման համակարգում կազմել է 2080, մագիստրատուրայի ուսանողների թիվը՝ 359, ասպիրանտների թիվը՝ 10: Հաշվետու շրջանում համալսարանը տվել է բակալավրի 567, մագիստրատուրայի 185, ասպիրանտուրայի 3 շրջանավարտ:

Անդրադառնալով բուհի գիտական գործունեությանը՝ բանախոսը նշեց, որ տարվա ընթացքում կազմակերպվել են առցանց գիտաժողովներ, տարաբնույթ գիտական քննարկումներ և ընթերցումներ: Համալսարանականները մասնակցել են նաև ՀՀ և արտերկրի բուհերում կազմակերպված նման միջոցառումների:

Հիշատակության արժանի են «Նորանկախ պետությունների համալսարանների ասոցիացիա»-ի անդամ Մերձդնեստրի, Աբխազիայի, Հարավային Օսիայի համալսարանների հետ համատեղ կազմակերպված օնլայն գիտաժողովները, որոնց ակտիվորեն մասնակցել են ԱրՊՀ ուսանողներն ու դասախոսները:

Իր տեսակի մեջ առանձնահատուկ էր 2019թ. նոյեմբերի 3-5-ը կազմակերպված և Արցախի մայր բուհի հիմնադրման 50-ամյակին նվիրված ուսանողական միջազգային գիտաժողովը, որին մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել ԱՀ, ՀՀ և արտերկրի շուրջ մեկ տասնյակ բուհերի 150-ից ավելի ուսանողներ:

Ուսումնական տարվա ընթացքում հրատարակվել է «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» հանդեսը՝ հասարակական և բնական ուղղություններով: Համալսարանի դասախոսները հրատարակել են 182 գիտական աշխատանք, որից՝ 14 մենագրություն, 1 ուսումնական ձեռնարկ, 5 ուսումնամեթոդական ձեռնարկ, 160 հոդված, 2 թեզիս:

Առանձնակի կարևորություն ունի ԱրՊՀ գիտխորհրդի որոշմամբ հիմնադրված «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը, որի առաջին 2 հատորները հրատարակվել են հաշվետու ժամանակընթացքում:

ԱրՊՀ-ն համագործակցության պայմանագրեր ունի ՀՀ և արտերկրի 50 բուհերի, գիտական և այլ կառույցների հետ:

Բուհերի հետ գործակցությունը դրսևորվել է փոխադարձ այցելությունների, ուսումնամեթոդական նյութերի փոխանակման, նոր գրականության տրամադրման, դասախոսությունների վարման, գիտաժողովների և հոբելյանական տարեդարձներին նվիրված միջոցառումներին ակտիվ մասնակցության, ուսանողական կառույցների ակտիվ գործակցության, ամառային հանգստի կազմակերպման և այլ ձևերով: Համագործակցության լուրջ մոտեցում կարելի է համարել Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի միջնորդությամբ 2019թ. ԱրՊՀ 1 ուսանողի մեկամյա ուսումնառությունը եվրոպական համալսարաններից մեկում:

2019-2020 ուստարում համալսարանում դասախոսություններով հանդես են եկել ՀՀ և արտերկրի առաջադեմ գիտնականներ, դասախոսներ, հասարակական և քաղաքական գործիչներ:

Կարևոր է նաև գործատուների հետ համագործակցության ընդլայնումը, որի արդյունքում կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, կլոր սեղաններ, գիտագործնական սեմինարներ:

Համալսարանի անունից ռեկտորը շնորհակալություն հայտնեց արտերկրի մեր բարերարներին: Առանձնակի կարևորեց եվրոպական կրթական հիմնադրամներից մեկի կողմից ցուցաբերված օժանդակությունը, որի արդյունքում համալսարանում իրականացվել են կարևոր աշխատանքներ. ստեղծվել է նորարարական տեխնոլոգիաներով հագեցած կենսաբանության լաբորատորիա, հիմնադրվել է տպարան, իրականացվել են «Հոգեբանական կենտրոնի զարգացում», «Ուսանողների և դասախոսների ուսումնագիտական գործուղումներ», «Մարզական գույքի ձեռքբերում», «Ուսանողական արշավներ», «Դասախոսների և ուսանողների որակավորում», «Կենսաբանության արդիականացումն Արցախում», «Բուհ-գործատու հետազոտություն» ծրագրերը, համալրվել է գիտական գրադարանի ֆոնդը:

Անընդհատ և հետևողական աշխատանքներ են տարվել հասարակության հետ կապերի արդյունավետ զարգացման, ԱրՊՀ վարկանիշի և հեղինակության բարձրացման ուղղությամբ: Շարունակվել է «Արցախի համալսարան» պաշտոնաթերթի և «Քո ժամանակը» ուսանողական թերթի հրատարակման գործընթացը, ԱրՊՀ պաշտոնական կայքէջում տեղադրվել է համալսարանի կյանքը լուսաբանող շուրջ 455 նյութ՝ ռուսերեն և անգլերեն թարգմանություններով:

ԱրՊՀ պաշտոնական կայքի հաճախելիություն-դիտումների ցուցանիշը կազմել է մոտ 89900: ԱՀ և ՀՀ լրատվամիջոցներում պարբերաբար տեղ են գտել համալսարանի կյանքին վերաբերող հրապարակումներ:

Ուսանողների մտահորիզոնի և քաղաքացիական հստակ կողմնորոշումների ձևավորման նպատակով ուստարվա ընթացքում ֆակուլտետների մակարդակով անց են կացվել բազմաթիվ ուսումնագիտական և ճանաչողական միջոցառումներ, մասնագիտական բանավեճեր ու ընթերցումներ, ինտելեկտուալ խաղեր, օլիմպիադաներ: Ընդ որում, բնագիտական առարկաներից օլիմպիադաներ են կազմակերպվել հանրապետության ավագ դասարանների աշակերտների համար, և, թերևս, նաև դրա արդյունքում է, որ 2019-2020 ուստարում ձևավորվել է «Քիմիա» կրթական ծրագրի խումբը, իսկ «Մաթեմատիկա» կրթական ծրագիր է ընդունվել 22 ուսանող, ինչը աննախադեպ էր վերջին տարիներին:

Ուսումնական տարվա ընթացքում ուսման մեջ ունեցած հաջողությունների, օրինակելի վարքի, միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու համար բազմաթիվ ուսանողներ արժանացել են դրամական պարգևների, պատվոգրերի, շնորհակալագրերի: Ուսխորհրդի ֆինանսական միջոցները հիմնականում ուղղվել են բարձր առաջադիմություն, ինչպես նաև սոցիալական խնդիրներ ունեցող, սակայն ուսման մեջ առաջադիմող ուսանողների խրախուսմանը, անհրաժեշտ պարագաների ձեռքբերմանը և արտագնա միջոցառումների նյութական ապահովմանը:

Բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում եղել ու մնում են համալսարանականների սոցիալական վիճակի բարելավման հարցերը: Միջոցառումներ են ձեռնարկվել առավել կարիքավոր ուսանողներին և աշխատողներին նյութական աջակցություն ցույց տալու ուղղությամբ:

2020թ. ԱրՊՀ դրամական եկամուտները կազմել են 928.548 մլն դրամ: Բյուջեից ֆինանսավորվել է ընդհանուր ծախսերի 47,9 %-ը:

2020թ. ֆինանսական ծախսերի 80,9%-ը կազմել է աշխատավարձը:

2021թ. ֆինանսական տարվա ծախսերի նախահաշիվը կազմում է 1038,0 մլն դրամ՝ նախորդ տարվա 1034,0 մլն-ի դիմաց:

Ձեռքբերումներով և կատարված աշխատանքի մեծ ծավալով հանդերձ համալսարանում լուծման կարիք ունեն մի շարք խնդիրներ.

- բարելավման կարիք ունեն մասնագիտական կրթության որակի ներքին և արտաքին գնահատման համակարգերն ու մեխանիզմները.
- թույլ է կրթության և տնտեսության միջև կապը, բավարար չեն սոցիալական գործընկերության մեխանիզմները.
- համալսարանի սահմանափակ ֆինանսական հնարավորությունները թույլ չեն տալիս լուրջ ներդրումներ կատարել գիտության զարգացման, դասախոսների վերապատրաստման, համալսարանի տեխնիկական հագեցվածության մակարդակում լուրջ առաջընթաց ապահովելու, հրատապ այլ խնդիրներ լուծելու համար.
- անբավարար են ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիությունն ու կիրառումը ուսումնական գործընթացում.
- դեռևս շարունակվում է շրջանավարտների սոսկ տեսական պատրաստվածությունը՝ առանց մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ կիրառական կարողությունների ու հմտությունների:

«Բուհական միջավայրը կրթության ու գիտության դարբնոց է, և մենք՝ կրթության սպասավորներս, իրավունք չունենք նահանջելու, թուլանալու, ավելին՝ պիտի ամուր կամքով ու հաստատուն գործելաոճով ոգևորենք երիտասարդ սերնդին՝ նորովի իմաստավորելու կրթության դերը, խրախուսենք բարձրորակ, մրցունակ մասնագետ դառնալու նրանց ձգտումը: Մենք հավատում ենք, որ միասնաբար՝ մեր կոլեկտիվի և ուսանողության հետ համատեղ ու արգասաբեր աշխատանքով մասնակիցը կդառնանք մեր ժողովրդի մի նոր վերածննդի, մի նոր ժամանակաշրջանի կերտման, որում կապաքինվեն վերքերը, կհառնի հույսը, կհաղթանակեն բարին ու սերը»,- այս լավատեսությամբ հաշվետվությունը եզրափակեց ռեկտորը:

Բուհում կատարված աշխատանքների և խնդիրների մասին ռեկտորի խոսքը շարունակեցին և իրենց առաջարկություններն արեցին խորհրդի անդամները:

Այսպես, մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը, նկատելով, որ հանգամանքների թելադրանքով անցում կատարելով հեռավար կրթության, ինչի պարագայում չի կարելի ասել, թե հաջողվել է ամբողջ նյութն ուսումնասիրել, հատկապես՝ ֆիզիկական պատրաստության և ՆՁՊ գործնական պարապմունքների, ինչպես նաև փորձուսուցման գծով, այնուամենայնիվ, այդ հարկադիր անցումն ունեցավ իր դրական կողմը. հիմք դարձավ այն հիմնախնդրի լուծման համար քայլերի ձեռնարկման, որի արդյունքում ԱրՊՀ-ն այսօր ունի հեռավար ուսուցման մշակված համակարգ: Այն ոչ միայն պարտականությունների սահմանում է, այլ նաև բոլոր մասնակից անձանց համակարգչային տվյալների մշակումն ու ներբեռնումն է ցանցում, որը հնարավորություն է տալիս նոր պայմաններում ավելի արդյունավետ կազմակերպել այդ գործընթացը:

Նա ներկայացրեց նաև մի քանի հեռանկարային խնդիրներ:

Քանի որ «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքի նախագիծը շրջանառության մեջ է ՀՀ-ում, որը վաղ թե ուշ պետք է ընդունվի նաև մեզ մոտ, նա առաջարկեց, որ օրենքի վերաբերյալ համալսարանն ունենա իր հստակ կողմնորոշումը, որովհետև, ըստ նրա, օրենքի և որակավորումների ազգային շրջանակի

ՏԵՍԼԱԿԱՆ

փոփոխությունը առաջադրում է բավականին մեծ փոփոխությունների ու խնդիրների հստակեցում: Այսօր եթե փոխվեց որակավորումների ազգային շրջանակը, դրանց համապատասխան մեծ ծավալի փոփոխություն պետք է մտցվի ԱրՊՀ ծրագրային հավատարմագրման գործընթացում:

Հաջորդ խնդրահարույց հարցերից մեկը համալսարանի ֆինանսավորումն է: Շ. Այդինյանն առաջարկեց Արցախի ուսուցիչների վերապատրաստմանը մասնակից դարձնել նաև ԱրՊՀ դասախոսներին: Մյուս կողմից էլ ԱրՊՀ-ն լուրջ խնդիր ունի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ուղղությամբ: Առաջարկեց այն դնել պլանային հիմքի վրա. առաջին փուլը լինի ներբուհական՝ իրականացնել տեղում, 2-րդ փուլը՝ Հայաստանում, 3-րդ փուլը՝ արտերկրում:

Խորհրդի անդամ, դպրոցի ուսուցիչ Իրա Մկրտչյանը առաջարկեց հաջորդ տարվա հաշվետվության մեջ գոնե մեկ տարվա կտրվածքով տեղեկություններ տալ շրջանավարտների աշխատանքի տեղավորման մասին: Ինչպես նշեց ռեկտորը, իր կեսդարյա գոյության ընթացքում Արցախի մայր բուհը թողարկել է 23 հազար շրջանավարտ: Լավ է, թե վատ, այսօր Արցախի պետական և մասնավոր հատվածներում աշխատողների 80 տոկոսը ԱրՊՀ շրջանավարտներ են: Ռեկտորի խոսքով՝ համալսարանն արդեն աշխատանքներ էր սկսել շրջանավարտների մասին տեղեկություններ հավաքելու ուղղությամբ, ինչը նաև հավատարմագրման գործընթացի պարտադիր պայմաններից է, սակայն համավարակը, այնուհետև՝ պատերազմը կիսատ թողեցին այդ աշխատանքը, ինչը, սակայն, կշարունակվի: Աշխատաշուկայի պահանջների հետ կապված՝ պետք է նաև մասնագիտությունների ուղղությամբ փոփոխություններ կատարվեն: Գիտխորհրդում և ռեկտորատում մի քանի անգամ քննարկվել է մասնագիտությունների վերափոխման հարցը, առաջարկվել է անցում կատարել ակադեմիական և բնագիտական մասնագիտություններին, մի շարք կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառել «Անօդաչու թռչող սարքեր» և այլն:

Իր նկատառումներն արեց ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը: Նրա գնահատմամբ՝ Արցախի պետական համալսարանը համավարակի պայմաններում և պատերազմից հետո արժանավայել կերպով տարավ իր գործունեությունը: Անդրադառնալով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծին՝ ասաց, որ նրա մշակման ուղղությամբ աշխատանքներ են տարվում, և անպայման դրվելու է հանրային քննարկման: Բոլոր այն բաղադրիչներն ու սկզբունքները, որոնք կհակասեն մեր միջավայրին, չեն ներառվի: Մտահոգիչ հարցերից են ԱրՊՀ և ընդհանրապես Արցախում գործող մյուս բուհերի հետազոտական աշխատանքների դրվածքը, աշխատաշուկայի հետ թույլ կապը: Նախարարի բնորոշմամբ՝ անհետացման եզրին հայտնված մի շարք մասնագիտությունների հարցը ոչ միայն դպրոցի, այլև բուհի խնդիրն է, ինչի կապակցությամբ կոնկրետ քայլեր պետք է սկսել: Նրա խոսքով՝ ցանկալի է մյուս տարվա հաշվետվության մեջ լսել նաև միջազգային ամսագրերում արցախցի դասախոսների տպագրված հոդվածների մասին, ինչը կխոսեր բուհի բարձր վարկանիշի մասին:

Հաշվետու տարում ԱրՊՀ կատարած աշխատանքները ներկաները գնահատեցին բավարար:

ԱՐՑԱԽ. ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ

Արցախի պետական համալսարանում մեկնարկել է «Արցախ. ներկան և ապագան» ծրագիրը, որի շրջանակում քննարկման են հրավիրվում հասարակական, քաղաքական գործիչներ, մտավորականներ: Այդ շարքից առաջին հանդիպումը ապրիլի 20-ին ԱՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանի հետ էր: Ներկա էին դասախոսներ, ուսանողներ և աշխատակիցներ:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը կարևորել է ԱՀ ԱԺ նախագահի հետ նման ձևաչափով հանդիպումը՝ նշելով, որ այդպիսի հանդիպումները լավագույն հարթակ են մտավորականությանն ու երիտասարդությանը հուզող հարցերը բարձրաձայնելու և ոլորտի պատասխանատուից անմիջապես պարզաբանումներ լսելու տեսանկյունից:

«Արթուր Թովմասյանը եղել է ԱրՊՀ շրջանավարտ և երկար տարիներ աշխատել է համալսարանում: Գնահատման արժանի է համալսարանի զարգացման գործում նրա ունեցած ավանդը: Ռեկտորատը որոշել է ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով պարգևատրել Ա. Թովմասյանին»,- նշել է ռեկտոր Ա. Սարգսյանը՝ ԱԺ նախագահին շնորհելով ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալ:

Արթուր Թովմասյանը կարևորել է համալսարանականների ծավալած կրթադաստիարակչական ու գիտական գործունեությունը՝ ի նպաստ Արցախի ներկայի և ապագայի: Նրա խոսքով՝ Արցախի պետական համալսարանն արդեն իսկ կայացած բուհ է և ունի իր ավանդույթները:

Բանախոսը ներկայացրել է ստեղծված իրավիճակի հետ կապված առկա խնդիրները, արտաքին քաղաքական մարտահրավերները, Արցախի անվտանգության ու կարգավիճակի հետ կապված որոշ մանրամասներ և պարզաբանել դրանց ուղղությամբ տարվող աշխատանքները:

ԿԱՆԳ ԱՌՆԵՆՔ ՄԵՐ ՍԽԱԼՆԵՐԻ ՎՐԱ ԵՎ ՈՒՂՂԵՆՔ ԴՐԱՆՔ

44-օրյա պատերազմում Արցախի կրած ծանր պարտության պատճառների մասին խոսվում է ամենուրեք՝ իշխանական բարձր մակարդակներից մինչև ստորին շրջանակներ: Կատարվածի, դառն իրականության վերաբերյալ յուրաքանչյուրն իր մեկնաբանությունն ունի, ինչպես նաև սխալներն ուղղելու և ըստ այդմ երկիրը ոտքի կանգնեցնելու իր բանաձևը: ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանն, օրինակ, մի շարք անգամներ հրապարակավ այն տեսակետն է հնչեցրել, որ «Հաղթում են կրթությամբ և պարտվում են կրթությամբ»:

Շատերը երևի հիշում են (հետաքրքրվողները կարող են այդ տեսանյութը դիտել համացանցում) 2016թ. հունվարին Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ԱՀ այն ժամանակվա վարչապետ Ա. Հարությունյանի հետ հանդիպման ժամանակ Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի ասպիրանտուրան նոր ավարտած երիտասարդ դասախոս Արթուր Օսիպյանի ելույթը, որտեղ նա հայտարարել էր, որ Ղարաբաղում կրթական բիզնես համակարգի պատճառով տոտալ անգրագիտություն է տիրում, որը նպաստում է ոչ միայն արտագաղթի աճին, այլև բացասաբար է ազդում բանակի մարտունակության վրա, սպառնալիքի տակ դնում մեր երկրի անվտանգությունը, ինչի հետևանքով 5-10 տարի հետո անդառնալի կորուստներ ենք ունենալու:

Բարձրագույն մաթեմատիկայի գծով փայլուն կրթություն ստացած երիտասարդի (նա էլ կարող էր ուրիշների պես իր գիտելիքներն իրացնել մեկ այլ երկրում, բայց գերադասել է վերադառնալ հայրենիք ու իր նպաստը բերել նրա զարգացմանը) գաղափարը, ցավոք, չխրախուսվեց, նույնիսկ հակառակը՝ նա ենթարկվեց հալածանքների: «Lragir.am» պարբերականն այդ օրերին գրեց. «Ղարաբաղում անգրագիտության և հնազանդության, տգիտության մթնոլորտը վերջին տարիներին խթանվել է բարձր մակարդակով: Ազատ ու ռացիոնալ մտածող ղարաբաղցիներն իրենց համար անտեսանելիորեն հայտնվել են անհասկանալի վախերի, անբնական հիերարխիայի ու թափանցող հիպնոսի մեջ: Անսպասելիորեն դադարել են խոսել թերությունների մասին, որովհետև կարծիք է տարածվել, թե դա անհիմաստ է և կարող է ջուր լցնել թշնամու ջրաղացին: Չնայած պարզ չէ՝ ինչու պետք է սեփական թերությունների քննարկումն ու առողջացման վերաբերյալ քննարկումներն ուրախացնեն թշնամուն... Ղարաբաղցիները պետք է միայն բացեն աչքերը, որովհետև մշուշն իրականում աչքերի մեջ է, այլ ոչ թե շուրջը»:

Հինգ տարի էլ չանցած, ավաղ, իրականություն դարձավ այդ երիտասարդի կանխատեսումը: Մեր երկիրը հայտնվեց, Համո Սահյանի բառերով ասած՝ ոչ թե անդունդի եզրին, այլ նրա հատակում: Բայց այս վիճակում էլ, երբ մեր հասարակությանը խիստ հուզում է հարցը՝ Արցախը փրկելու ճանապարհ կա՞, թե՞ ոչ, Արթուր Օսիպյանը, որն այսօր ղեկավարում է «Իմ իրավունքը» հասարակական շարժումը, իր ուրույն դիրքորոշումն ունի. Արցախի զարգացման ճանապարհային քարտեզը նա դարձյալ տեսնում է կրթության և գիտության զարգացման մեջ: Ինչպե՞ս է դա պատկերացնում, ներկայացնենք նրա տեսլականը.

- Այո, հնարավոր է փրկել Արցախը, հնարավոր է երկիրը կառուցել այնպես, որ զարգանա և լինի աշխարհի բարեկեցիկ երկրներից մեկը: Դրա համար պետք է առաջնահերթ և կարճ ժամկետներում կրթության ու գիտության մակարդակը կտրուկ բարձրացնել: Պետք է սկսել դպրոցներից: Օրինակ, ֆիզմաթ դպրոցի հիմքի վրա կառուցել այնպիսի կրթական հաստատություն, որի մասնագետները համապատասխանեն միջազգային չափանիշներին: Նրանք կարող են լինել թե՛ Արցախի ուսուցիչներից և թե՛ դրսից հրավիրված: Դա պետք է լինի շատ բարձր որակի դպրոց, որպեսզի նրա շրջանավարտը ոչ մի խնդիր չունենա աշխարհի բարձր վարկանիշային ցանկացած բուհ ընդունվելու համար: Այդ դպրոցի չափանիշներից և պահանջներից մեկն այն է լինելու, որ նրա սաները միջազգային օլիմպիադաներում տեղեր զբաղեցնեն: Այդ դպրոցը մրցույթով պետք է ընտրի այնպիսի մասնագետներ, որոնց համար միջազգային օլիմպիական խնդրագիրքը շատ մատչելի կլինի: Եվ նրանք պետք է ստանան բարձր աշխատավարձ, նախարարից 2-3 անգամ բարձր, որպեսզի իրենց ամբողջ ժամանակը նվիրեն ապագա կադրերի պատրաստմանը:

Դրան զուգահեռ, 2-3 տարվա ընթացքում Արցախի պետական համալսարանը պետք է հասցնել միջազգային մակարդակի, ընդ որում, առաջնահերթ՝ ֆիզմաթ, մեխմաթ, կիրառական մաթեմատիկա ֆակուլտետների որակը կտրուկ փոխելով: Դա պետք է արվի բարձր կարգի մասնագետներ հրավիրելով: Համալսարանը նախ և առաջ հիմնված է մասնագետների վրա, ուրեմն նրանց համար այնպիսի պայմաններ պետք է ստեղծել, որ հաճելի լինի ապրել ու աշխատել Արցախում: Պետք չէ հույս պահել, թե ճանաչված մասնագետը, եթե հայրենասեր է, պարտավոր է գալ այստեղ ու ցածր աշխատավարձով ապրել: Դա տարբերակ չէ և արդար էլ չէ: Բացի դրանից, նպատակային չէ, որ Արցախի գիտակրթական հաստատություններում լինեն միայն հայեր, չպետք է սահմանափակվել լոկ հայազգի մասնագետներով: Երկու-երեք տարվա ընթացքում եթե մի 100 այդպիսի մասնագետ ներգրավենք մեր համալսարան, դա նոր շունչ կտա բուհին:

Սրանով մենք պետք է 30 տարի առաջ զբաղվեինք: Եթե ունենայինք միջազգային մակարդակի համալսարան, նույնիսկ եթե սահմանում զինվոր կանգնած չլիներ, մեր բանակի մարտունակությունն ապահովված կլիներ, և մեր նկատմամբ այսպիսի վերաբերմունք չէր դրսևորվի: Արցախն աշխարհում ճանաչելի պիտի դարձնել նախ և առաջ իր համալսարանով. հնարավոր չէ, որ բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր հայտնագործություն լինի, ու աշխարհը դա չընդունի:

Հիմա մենք Արցախը զրոյից ենք կառուցում, և նոր Արցախը պետք է կառուցված լինի գիտական հենքի վրա: Առաջին քայլերն, ինչպես նշվեց, դպրոցից ու համալսարանից պետք է սկսել: Սա հենց այն ճանապարհն է, որով մենք կարող ենք Հադրութ ու Շուշի վերադարձնել, այլ ոչ թե ապավինել ինչ-որ քաղաքական գործիչների պատեհապաշտ հայտարարություններին: Անհիմաստ է հույսը դնել միջազգային ասպարեզում իրականացվող քաղաքական խաղերի վրա՝ ակնկալելով, թե այդ գործընթացում ինչ-որ մեկին ձեռք կտա, և մեր հողերը մեզ կվերադարձնեն: Հադրութը հետ է բերվելու, և Արցախը ոտքի է կանգնելու, եթե մենք գիտությանը և կրթությանը լիարժեք ուշադրություն դարձնենք: Հետագա մեր պետական քաղաքականությունը պետք է լինի հետևյալը. ազգաբնակչության նվազագույն սոցիալական կարիքները բավարարելուց հետո մնացած ռեսուրսներն ամբողջությամբ ուղղել դեպի կրթություն ու գիտություն: Պետք է Արցախում ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ կիրթ, բարեխիղճ, ազնիվ քաղաքացիները կարողանան ինքնահիրացվել, և նրա՛նք վաղը Արցախը ղեկավարեն: Այդ մթնոլորտը պետությունը պետք է ստեղծի, ժողովուրդն էլ աջակցի այդ նախաձեռնություններին: Դրա համար անհրաժեշտ գումարները կան, պարզապես եղած ամեն մի լումա պետք է տեղին ու նպատակային օգտագործվի:

Կանգ առնենք մեր սխալների վրա և ուղղենք դրանք: Եթե կարողանանք Արցախը դարձնել միջազգային գիտական կենտրոններից մեկը, հույսներս դնելով միայն մեզ վրա, կհաջողվի կերտել մեր երկրի ապագան:

Սա՛ է փրկության ճանապարհը:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՑՔ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԻՆԳ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ

1970թ. ամառվանից Բաքվի Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի նորաբաց մասնաճյուղի (բացվել է 1969թ.) ուսանող էի: Ես հպարտության մի առանձին զգացում էի ապրում. չգիտեմ նրա՞ համար, որ գյուղում ուրիշ ուսանող չկար, թե՞ արդեն ինձ ուսուցչի դերում էի պատկերացնում: Հեռակա սովորողների մասին կարծրատպություն կար. «Այն բռնություն է գիտության դեմ փաստաթղթերի համար»: Հենց առաջին կուրսից որոշեցի գոնե իմ պահով ձեռնոց նետել այդ կարծրատպության դեմ: Լավ սովորելը դեռ քիչ էր, մանկավարժական գրականության, նաև գեղարվեստական գրականության ուսումնասիրությունը ինձ տարավ նախընտրած ճանապարհով:

Շուրջ քառորդ դար աշխատել եմ խորհրդային դպրոցում, վարել տարբեր պաշտոններ (տնօրեն, փոխտնօրեն): Նրանք, ովքեր իրենց աշխատանքային կենսագրության մի հատվածն անց են կացրել խորհրդային դպրոցում, չեն կարող զուգահեռներ չանցկացնել խորհրդային և հետխորհրդային դպրոցական կրթական համակարգերի միջև: Բայց նպատակը պետք է լինի լավի ու դրականի գնահատումը, որի ամուր հիմքերի վրա ապագայի կերտումը կլինի ավելի հաստատուն և արժևորված: Իրավացի չէ՞ էնգելսը, որ գրել է. «Ալեհեր անցյալը բոլոր պարագաներում ապագա բոլոր սերունդների համար կմնա որպես արտակարգ հետաքրքիր դարաշրջան, որովհետև այն կազմում է հետագա ավելի բարձր զարգացման հիմքը»:

Այն, որ խորհրդային կրթական համակարգն իր ավանդույթներով, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին մատուցած ծառայություններով բարձր հիմքերի վրա էր, մինչև հիմա էլ շատ-շատերի անձնական համոզմունքն է: Սակայն քչերն են փորձել դասակարգել, առանձնացնել լավն ու ընդօրինակելին և այն, որից անհրաժեշտ է խույս տալ:

Խորհրդային ինքնատիպ կրթական համակարգի զարգացումը պայմանավորված էր սոցիալիստական հասարակարգի՝ որպես նոր հասարակական ֆորմացիայի, զարգացմամբ, ինչպես նաև կոմունիստական գաղափարախոսության արմատավորմամբ ու զարգացմամբ:

Ստացվում է, որ խորհրդային կրթական համակարգը ոչ թե փորձ էր անում ինտեգրվել արևմտյան կրթական համակարգին, այլ ընթանում էր արևմտյան (կապիտալիստական) գաղափարախոսության դեմ պայքարի ճանապարհով: Երկրի տնտեսական զարգացման համար բարձրորակ մասնագետների պատրաստման հիմքերը դրված էին դպրոցների վրա: Եթե այս բոլորին գումարենք նաև այն, որ Խորհրդային Միությունը ներքաշված էր սառը պատերազմի հորձանուտը, ապա պարզ կդառնա, որ զարգացած և ինքնատիպ կրթական համակարգ ունենալը պատմական անհրաժեշտություն էր: Պատահական չէ, որ 60 տարի առաջ, երբ Յուրի Գագարինը թռավ տիեզերք, ամերիկյան առաջավոր պարբերականները գրեցին. «Խորհրդային ուսուցիչը հաղթեց ամերիկյան ուսուցչին»:

Եթե փորձելու լինենք գնահատել խորհրդային դպրոցի դրական կողմերը, ապա առաջին պլանում պետք է դիտարկել ուսման համեմատաբար բարձր որակը, որին նպաստում էր մանկավարժական կադրերի պատրաստվածության, ինչպես նաև պատասխանատվության բարձր մակարդակը: Ինչ վերաբերում է դասագրքերին ու ծրագրերին, ապա պետք է շեշտել, որ ավելի մատչելի էին ու բեռնաթափված: Շոշափելի նպաստավոր հիմքերի վրա էին գտնվում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները, առավել ևս՝ գործնական հարաբերությունները: Այս գործընթացին նպաստում էին ինչպես ուսումնական, այնպես էլ արտաուսումնական միջոցառումները: Գիտական բնույթի բանավեճեր, գիտելիքների ստուգատեսներ, նպատակային էքսկուրսիաներ, կինոդիտումներ և քննարկումներ, գրքերի քննարկումներ, հավաքույթներ և այլն: Կրթությունն ու դաստիարկությունը միածույլ էին և նպաստում էին աշակերտների անհատականության ու աշխարհայացքի ձևավորմանն ու զարգացմանը:

Դպրոցներում արհեստանոցների, որոշներում տրակտորների, ավտոմեքենաների առկայությունը, ուսումնափորձնական հողամասերում տարվող գործնական աշխատանքները լավ նախադրյալներ էին ստեղծում աշխատանքային դաստիարակության ու սովորողների մասնագիտական կողմնորոշման համար:

Խորհրդային դպրոցի ուսուցիչը հասարակության մեջ իր հաստատուն տեղն ուներ, նրան հարգում ու սիրում էին, հավատում էին նրա խոսքին և գնահատում նրա ծանրակշիռ ավանդն ու նվիրվածությունը մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության սուրբ գործին:

Սակայն 70-ական թվականներին սկսված տնտեսական ճգնաժամն արագորեն տարածվեց հասարակական կյանքի մյուս ենթակառուցվածքների վրա, այդ թվում նաև՝ կրթական համակարգի: Դրությունը շտկելուն չօգնեց նույնիսկ հայտնի դպրոցական ռեֆորմը, որից էական դրական տեղաշարժեր էին ակնկալում: Միանգամայն ճշմարիտ էր այն պնդումը, թե ոչ մի համակարգ, այդ թվում՝ կրթականը, իդեալական լինել չի կարող, դրանք էլ ինչ որ-տեղ նման են կենդանի օրգանիզմների. ծնվում են նոր գաղափարներ, զարգանում, հնանում ու դեպի անկում գնում:

ԽՍՀՄ-ի փլուզումը հանգեցրել էր հասարակական, քաղաքական, տնտեսական հարաբերությունների արագ փոփոխությունների, որոնք խոր ազդեցություն էին թողել կրթական համակարգի վրա: Հետխորհրդային 30 տարիների ընթացքում դպրոցական համակարգը ամենաշատն է ենթարկվել փորձությունների: Գիտելիքների գնահատման նոր չափորոշիչներ (թելադրում էին իշխանության եկած ուժերը), գնահատման բալայաին համակարգի փոփոխություն, գիտելիքների ստուգման թեստային համակարգի ներմուծում (տառերինը ոչ, թվերի ճանաչումով կարելի է դրական գնահատական ստանալ), 12-ամյա կրթական համակարգի ներդրում՝ 12-րդ դասարանի ուսումնական գործընթացի կիսամյակային, ինչ-որ տեղ մասնակի (անհատական) նախասիրություններով հանդերձ: Ավագ դպրոցների բացում, որն այդպես էլ էական որակական ցուցանիշներ չապահովեց (ժամանակին արժանացավ խիստ քննադատության): Իրեն չարդարացրեց քննությունների հանձնման կենտրոնացված ձևը:

Հենց միայն այն, որ այդ տարիներին համակարգը ղեկավարել են շուրջ տասը նախարարներ, ինքնին փաստում է, որ համակարգը չի արդարացնում կառավարության սպասելիքները:

Անկախության 30 տարիների ընթացքում կրթական համակարգի մեծագույն նվաճումը դպրոցաշինությունն է: Հանրապետության շատ բնակավայրերում, և՛ գյուղական, և՛ քաղաքային, կառուցվեցին հարմարավետ դպրոցներ, կահավորվեցին, ձեռք բերվեցին դիդակտիկ նյութեր, կահավորվեցին առարկայական դասարան-կաբինետներ, լաբորատորիաներ: Շատ բնակավայրերում դպրոցներին կից կառուցվեցին մարզադահլիճներ, մարզադաշտեր: Գրեթե բոլոր դպրոցներն ունեն համակարգչային կաբինետներ, ինտերնետային կապ: Մանկավարժական, մասնագիտական գրականության պակաս չկա: Ուսուցիչները սիստեմատիկ (5 տարվա կտրվածքով) մասնակցում են որակավորման դասընթացների: Որոշ դպրոցներում սկսել են գործել «Արմաթ» և ռոբոտաշինության տեխնիկական խմբակներ: Այս բոլոր փոփոխությունները կրթության բնագավառում, այնուհանդերձ, չբերեցին ցանկալի արդյունքի, այն է՝ կրթության որակի էական բարձրացման: Սա հարցերի հարցն է, որ պիտի լինի կրթության նախարարության, բուհական կրթության, հանրակրթական դպրոցների կոլեկտիվների ուշադրության կենտրոնում:

Հասարակության մեջ տարվում է դպրոցի՝ իբրև անկախ սուբյեկտի, կեղծ քաղաքականություն, մինչդեռ դրանք օր օրի ավելի են ներքաշվում քաղաքականության մեջ (նույնն է, ինչ խորհրդային դպրոցի դասակարգային բնույթը): Սա գալիս է մեր յուրովի, խիստ նեղ անձնականացված մտածողությունից, ասել է թե՝ բացակայում է ազգային արժեքների գնահատման գաղափարախոսությունը: Եթե ասեմ, որ մեր հասարակությունը ունի գիտակցական այն մակարդակը, որ կարողանա զատել ազգանպաստը, ժամանակին համահունչը, սխալված կլինեմ, քանզի նա հեշտությամբ թեքվում է դեպի իշխանությունը՝ թվացյալ շահեկանը՝ չխորանալով էության մեջ:

Վերջին ժամանակներս դպրոցական ծրագրերում շահարկվող փոփոխությունները հենց նշածիս փաստումն է: Շահարկվեց «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան ծրագրից հանելը (եկեղեցու ներքին գործերին կառավարության միջամտության փորձից հետո): (Նմանատիպ կարծիք հնչեց «Շախմատ» առարկայի վերաբերյալ. նպատակը, անշուշտ, նախկին իշխանությունների ձեռքբերումներն են՝ եռակի Օլիմպոս նվաճած հավաքականի հեղինակությունը խաթարվեց այն աստիճանի, որ առաջատարը հեռացավ Հայաստանից): Խոսք գնաց գրականության դասագրքերից որոշ դասականներ հանելու մասին, ոտնձգություններ եղան բուհերում հայոց լեզվի նկատմամբ՝ թողնելով այն կամավոր ուսումնասիրելու: Վերաշարադրվեցին «Հայոց պատմություն» առարկայի առանձին բաժիններ իշխող կուսակցությանը հարիր եղանակով: Հուսով եմ, հեղինակները չեն մոռացել կառավարման հատուկ և եզակի ձևի՝ «հանրահավաքային» կառավարման մասին:

Դպրոցները պետության կողմից չեն դիտվում որպես մատաղ սերունդ, պետության արժանավայել քաղաքացի դաստիարակելու դարբնոց: Դպրոցներից վանվում է մանկավարժությունը, խարխլվում է նրանց ինքնուրույնությունը: Դպրոցական խորհուրդները, ծնողական խորհուրդները մատնվում են անգործության: Ուսուցիչ-աշակերտ-ծնող-հասարակություն կապը շատ թույլ է և չի նպաստում կրթության գործի բարելավմանը: Գյուղական բնակավայրերում մշակութային կյանքի ճգնաժամն ինքնին ազդում է դպրոցական համակարգի կոորդինացված աշխատանքի վրա: Վերևներից պարտադրած ցանկացած նորամուծություն, անկասկած, դեմ է առնում ուսուցիչների դժգոհության պատին:

Համակարգում ցանկացած արմատական փոփոխություն պետք է բխի ազգային շահերից: Զարգացած պետությունների փորձն ուսումնասիրելն անհրաժեշտություն է, բայց այն ներդնելը՝ ոչ միշտ շահեկան: Ինձ թվում է, որ բարեփոխումների անհրաժեշտությունը պետք է ծնվի հենց դպրոցում: Հենց ուսուցչական գիտակ ու փորձված կոլեկտիվները պետք է լայն քննարկումների արդյունքում հուշեն կրթության որակի բարձրացման ուղիները:

Դպրոցական համակարգում առկա հիմնահարցերից պետք է առանձնացնել բուհից դպրոց եկող մասնագետների պատրաստվածության մակարդակը: Շատ անգամ է հաստատվել այն փաստը, որ մանկավարժի մասնագիտություն ընտրում են միջին կամ միջինից ցածր ընդունակություններ ունեցող շրջանավարտները: Պարզ է, որ դպրոցն էլ ստանում է հենց նույն մակարդակի մասնագետներ: Բուհերի առատությունը, ինչ խոսք, նպաստում է հասարակության մեջ բարձրագույն կրթություն ունեցողների տոկոսի բարձրացմանը, որ գնահատվում է իբրև զարգացած հասարակության չափանիշ: Իրականում մեր բուհերը հնարավորություն ունեն համարյա բոլոր շրջանավարտներին ընդգրկելու ուսուցման պրոցեսի մեջ և այդպես էլ անում են: Արդյունքում հաստատվում է վերը նշածս: Այնինչ բուհական կրթության բուն նպատակը պետք է լինի «Ինտելեկտ՝ գումարած բնավորություն» բանաձև-դրույթը: Բնավորություն՝ առաջին հերթին պետք է հասկանալ ազգային բնավորության ձևավորում, ասել է թե՝ մեզ բոլոր առումներով հոգով ուժեղ սերունդ է հարկավոր, ազգային արժեհամակարգ ունեցող, ազգային մշակույթ հարգող, գնահատող: Ազգային մտածողությամբ և ազգային բնավորությամբ, ինչու չէ, ազգային հպարտությամբ սերունդ պիտի ունենանք, որ պիտի լավ իմանա մեր ժողովրդի անցած ուղին, կարողանա ըմբռնել ներկան ու կանխատեսել ապագան:

Կրթության բնագավառի առկա հիմնահարցերը լուծելու բանալին գտնվում է ուսուցչի ձեռքին: Ուստի ուսուցչի հեղինակությունը բարձրացնելը, նրան որպես մտավորականության սերուցքի գնահատելը, նրա սոցիալական վիճակն ըստ արժանվույն բարելավելը պետք է որ գտնվեն կառավարության ուշադրության կենտրոնում: Այո, կար ժամանակ, երբ ուսուցչի հեղինակությունը վեր էր ածվում պաշտամունքի: Այսօր էլ ավագ սերնդից շատերը երանությամբ են հիշում իրենց առաջին ուսուցիչներին:

Շատ անգամ ենք լսել իշխանավորներից. «Դատավորներին, դատախազներին բարձր աշխատավարձ տանք, որ լիարժեք օգտագործեն իրենց մտավոր ներուժը և մեր երկրի համար արժանավայել քաղաքացիներ կրթեն ու դաստիարակեն: Ոչ ոք չի բարձրաձայնում, որ դպրոցից անմիջապես զորակոչվող երիտասարդը, որ հսկում է մեր պետության սահմանները, աչալրջորեն պաշտպանում է հայրենիքը, նույնիսկ պատրաստ է հանուն հայրենիքի զոհել կյանքը (ինչպես դա ապացուցվեց Արցախյան գոյապայքարի ողջ ընթացքում). դա հենց մեր ուսուցիչների նույնքան հայրենանվեր աշխատանքի արդյունքն է:

Համակարգի պատասխանատուների ամենաբարձր հանդիպումների ժամանակ արծարծվում է այն միտքը, որ շրջանավարտները բուհ ընդունվելիս խույս են տալիս բնագիտական առարկաներից, բայց ոչ ոք չի մատնանշում, որ ըստ ուսումնական պլանի միջնակարգ դպրոցում աշխարհագրություն, ֆիզիկա, քիմիա, բնագիտություն+կենսաբանություն առարկաներին հատկացված է համապատասխանաբար 10, 15, 11, 16 ժամ: Ստացվում է, որ այս մասնագիտություններն ընտրածները մինչև վերջ դատապարտված են աշխատելու թերբեռնված ժամաքանակով: Իսկ թերբեռնվածությամբ ուսուցչին պահելով դպրոցում՝ լրիվությամբ չենք օգտագործում նրա մտավոր և ֆիզիկական կարողությունները: Այդ ուսուցիչներն ստիպված են լինում ընտանիքի հոգսերը հոգալու համար լրացուցիչ աշխատանք փնտրել աշխատաշուկայում, որը, բնականաբար, պատվաբեր հաճույք չէ:

Անկախ ամեն ինչից, ուսուցիչները միշտ էլ գիտակցումով են մոտեցել իրենց աշխատանքի կարևորությանը: Այսօր էլ նրանց խղճին է դրված պատերազմում կրած պարտությունից ու տեղահանությունից ստացած՝ բնակչությանը բարդ ու խճճված հոգեվիճակից դուրս բերելու առաքելությունը:

Լևոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
գ. Եմիշճան

30 ՏԱՐԻ ԱՌԱՋ

1991Թ. ԱՊՐԻԼ

Ես նշել եմ, որ 1991 թվականին մեզ նորանոր դժվարություններ են սպասվում: Հենց տարվա սկզբից Ադրբեջանը գրեթե ամենաբարձր մակարդակով պարբերաբար սկսեց հնչեցնել այն միտքը, որ հայերը պետք է հեռանան Ղարաբաղից, եթե նրանք համաձայն չեն ենթարկվել Ադրբեջանին: Դեռևս 1991-ի փետրվարի սկզբին Ադրկոմկուսի երկրորդ քարտուղար, ԼՂ կազմկոմիտեի ղեկավար Վ. Պոլյանիչկոն, ելույթ ունենալով Բաքվում, հայտարարել է. «1991թ. կհայտարարվի Ղարաբաղի տարի: Այս տարին կլինի Ադրբեջանի դժվարությունների վերջին տարին: Ղարաբաղի հողը մեր հողն է: Եվ մենք պետք է գրավենք այն մեր երեխաների համար»:

Մեկը չկա՝ հիշեցնի, ա՛յ ծախված ռուս, դու՝ որտե՞ղ, Ղարաբա՛ղը որտեղ, որ այդպես քծնվում ես թուրքի առաջ:

Դեռ 1991-ի մարտի 14-ին Եվրախորհրդարանը ընդունել էր բանաձև, որում հատուկ ընդգծված էր հայ փախստականների աղետալի դրությունը, և կոչ էր արվում ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին անհապաղ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել դադարեցնելու ինչպես Հայաստանի և Ղարաբաղի շրջափակումը, այնպես էլ կանխամտածված և բռնի տեղահանության ենթարկվող Ղարաբաղի ու հարակից շրջանների հայ բնակչության անվտանգության նկատմամբ ոտնձգությունները:

1991թ. մարտի 25-ից ադրբեջանական օմօն-ը սկսեց կանոնավոր կերպով գնդակոծության ենթարկել Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերը:

1991 թվականի ապրիլի 3: Այսօր կարծես թե մի լույս բացվեց մեզ համար. մեր հարցի լուծման հույս երևաց: Բանն այն է, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ ստեղծվում ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հնարավորություն: Որոշման մեջ միևնույն ժամանակ նշվում է, որ դուրս եկող հանրապետությունները և դրանց մեջ մտնող ազգային-վարչական փոքրամասնություն կազմող միավորումները ևս կարող են տնօրինել իրենց իրավունքները և մնալ ԽՍՀՄ տնտեսական համագործակցության մեջ, կամ ում հետ ցանկանում են, կարող են լինել նրա հետ, կամ մնալ ինքնուրույն: Այդ որոշման իրավասության քննարկումներին մասնակցում էին և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի, և՛ ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորները: Թվում էր, հարմար ժամանակ է եկել Ադրբեջանի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու համար, իսկ ԼՂԻՄ-ի դուրս գալն էլ՝ Ադրբեջանի կազմից: Չգիտես ինչու, Ադրբեջանը իր դուրս գալը նորմալ էր համարում, իսկ ԼՂԻՄ-ի դուրս գալը Ադրբեջանի կազմից՝ ոչ: Ադրբեջանը դրանից հետո ավելի խստացրեց հայերի նկատմամբ ճնշումը: Կամ ենթարկվել, հլու-հպատակ մնալ այդ երկրի կազմում, կամ հեռանալ: Ադրբեջանը սկսեց մի որոշումը մյուսի հետևից ընդունել:

Այսպես, 1991թ. ապրիլին ԼՂԻՄ-ի և հարակից շրջանների մի շարք հայաբնակ գյուղերի բնակիչների տեղահանման մասին որոշումներ ընդունեց:

1991թ. ապրիլի 10-ին այդպիսի որոշում ընդունեց Ադրբեջանի պաշտպանության խորհուրդը:

1991թ. ապրիլի 11-ին նման որոշում ընդունեց նաև Ադրբեջանի Գերագույն խորհուրդը:

Ապրիլի 13-ին նույնպես ընդունվեց որոշում:

1991թ. ապրիլի 16-ին Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը ԱԱԿ, ՆԳՆ, դատախազության ղեկավարության հետ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ հայերի տեղահանման գործողությունները հանձնարարեց Ներքին գործերի նախարար Ասադովին: Չգիտեմ նշել եմ, թե ոչ, ԼՂԻՄ-ի և հարակից շրջանների գյուղերից բնակչության դուրս բերումը շատ ավելի վաղ է սկսվել, մասնավորապես, 1989-1990թթ. Հյուսիսային Արցախի Կուշչի, Արմավիր, Ազատ, Կամո գյուղերի բնակիչներն իրենց դեմ չդադարող զինված հարձակումների, շրջանային իշխանության մարմինների ավելի ուժեղ ճնշումների պատճառով ստիպված էին լքել իրենց բնակավայրերը;

1991թ. ապրիլի 18: Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղի մոտ պայթեցվել է «ՈւԱԶ» մակնիշի մի մեքենա, որի հետևանքով զոհվել են երեք և գերեվարվել երկու հոգի: Ուժեղ պայթյուն է եղել նաև երեկոյան ժամը 8-ին: Պայթեցնողն անհայտ էր, բայց, չգիտես ինչու, կասկածն ընկել էր Մաճկալաշենի վրա:

1991թ. ապրիլի 19-ին երեսուն զինվորներ ավտոմատներով զինված մտել են գյուղն ու տակնուվրա արել այն: Ստուգողների շարքում կար մի ադրբեջանցի լեյտենանտ, որը շատ կոպիտ էր վերաբերվում: Բնակչությունը, չկարողանալով այլևս նրան տանել, հեռացրեց խմբից:

1991թ. ապրիլի 16-ից դադարեցվել էր Շահումյանի շրջանի էլեկտրաէներգիայի մատակարարումը, անջատվել էր հեռախոսակապը:

1991թ. ապրիլի 19-ից Գետաշեն գյուղում տեղավորված ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի անձնակազմը դուրս բերվեց գյուղից:

1991թ. ապրիլի 21-ին Բաքվի պահանջով արգելվեցին Երևանից Շահումյան ուղղաթիռների կանոնավոր չվերթերը:

1991թ. ապրիլի 22-ին՝ քողարկված մահ: «Այսօր ժամը 20:10 րոպեին տեղի ունեցավ դժբախտ պատահար Հայկավանի նոր բնակելի թաղամասում, որտեղ հայեր և ադրբեջանցիներ են ապրում: Կրկժան թաղամասի կողմից գտել և հանել են պայթուցիկ հարմարանք և սկսել խաղալ, որի հետևանքով մահացել է Սումգայիթից փախած 16-ամյա Սլավիկը, վիրավորվել են նրա քույրը՝ 8-ամյա Ստելլան և բաքվեցի փախստական Արթուր Եսայանը, որոնց տարան հիվանդանոց»:

Պատերազմի և աշխատանքի մի խումբ վետերաններ՝ 7 հոգի, «Այլընտրանք չկա» վերտառությամբ դիմումով դիմել են «Խորհրդային Ղարաբաղ» թերթին, որտեղ իրենց վրդովմունքն են հայտնել ստեղծված իրավիճակի կապակցությամբ: Ընթերցում եմ այս վետերանների դիմումը, որոնք ինձանից մեծ են ու փորձառու, և զարմանում եմ, որ դեռ հավատ ունեն ու ասում են. «Աստված մեզ՝ հայերիս և ձեզ այնպես է կամեցել, որ մենք ապրենք կողք կողքի: Ինչ էլ որ լինի, ինչ էլ որ փոխվի հասարակական կամ տնտեսական ոլորտներում, մեզնից ամեն մեկը թշնամաբար չպետք է ապրի, այլ պետք է ապրի խաղաղությամբ, պետք է նստի սեղանի շուրջ բանակցությունների և ընդունի մի քանի պարտադիր պայմաններ, որոնց թվում՝

ա) չեղյալ հայտարարվեն այն բոլոր որոշումները, որոնք ընդունվել են Ադրբեջանի կողմից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989-ի նոյեմբերի 28-ին ընդունած տխրահռչակ որոշումից բխած,

բ) վերացնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շրջափակումը,

գ) բեկանել Ադրբեջանի այն բոլոր որոշումները, որոնք կապված են ժողովրդագրության փոփոխման հետ,

դ) մարզի տարածքից դուրս հանել Ադրբեջանի միլիցիայի հատուկ ստորաբաժանումները և դրսևորել ողջախոհություն, ապրել խաղաղությամբ և այլն»:

Այդ հարգելի վետերաններն են Գրիգոր Ավանեսյանը, Ռոզա Ավանեսյանը, Վահան Դանիելյանը, Թևան Ղազարյանը, Հայկ Սարգսյանը, Գոհար Սարինյանը, Համայակ Սաֆարյանը:

Թուրքը երբեք չի փոխվի, քանի որ նա սովոր է թալանի, գողության և սպանության: Հրապարակի վրա է նաև Ռուսաստանի մտավորականության բողոքը Շահումյանի և Գետաշենի ենթաշրջանների նկատմամբ կատարվող վայրագությունների առթիվ: Նրանք պահանջում են վերջ տալ Ադրբեջանի օմօն-ականների և խորհրդային բանակի սանձազերծած դաժանություններին, որ կատարվում են Ղարաբաղում:

1991թ. ապրիլի 22: ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ընտրողների ակումբ-գիտաժողովին մասնակցել են 45 գիտական ինստիտուտների ներկայացուցիչներ, որտեղ լսել են Անդրեյ Նույկինի զեկուցումը, ինչպես նաև մամուլում հրապարակված տեղեկություններ ԼՂԻՄ-ում տիրող իրավիճակի մասին: Ընդունել են բանաձև, որով վրդովմունք են հայտնել Գորբաչովին՝ Ղարաբաղից հայերի բռնի տեղահանման առթիվ և պահանջել անհապաղ վերջ տալ այնտեղ ժողովրդագրության վիճակը փոխելու քաղաքականությանը: Գիտաժողովը պահանջեց ԼՂԻՄ-ում վերականգնել խորհրդային իշխանությունը, վերացնել ճանապարհների շրջափակումը, ԽՍՀՄ ներքին զորքերը դուրս բերել Ադրբեջանի իշխանության փաստացի ենթակայությունից: 1991թ. ապրիլի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահը որոշել է ապրիլի 25-ին ժամը 16-ին գումարել հանրապետության Գերագույն խորհրդի նիստ հետևյալ օրակարգով.

1. Արցախի Շահումյանի շրջանի Գետաշենի ենթաշրջանի գյուղերում ԽՍՀՄ բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից հակաժողովրդական գործողություններ հրահրելու փաստերի ուսումնասիրման և համապատասխան ընթացք տալու մասին հանձնաժողով կազմելու,

2. Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունների սրման և միութենական որոշ գերատեսչությունների կողմից հակաժողովրդական գործողությունների հրահրման փաստերն ուսումնասիրելու և քննարկելու համար ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումար հրավիրելու մասին:

1991թ. ապրիլի 24: «Խորհրդային Ղարաբաղ» թերթում Զորի Բալայանի «Դեր Զորից մինչև Սումգայիթ» հոդվածն է:

Այսօր Գանձասարում մարդաշատ է. Պարգև Սրբազանը Պատարագ է մատուցում Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահը նամակ է հղել ԽՍՀՄ ղեկավարներին՝ խնդրելով շտապ միջոցներ ձեռնարկել տարածաշրջանի հայ բնակչության պաշտպանության և անվտանգության երաշխիքների ապահովման համար:

Իմ հոդվածներից մեկում գրել եմ, որ հեռուստատեսության շենքը պայթեցվել է, և մեծ վնաս է պատճառվել: Այսօր էլ պարզվում է, որ պայթեցումից հետո շենքը պիտանի չէ օգտագործելու, որ պետք է կառուցվի նոր հեռուստակայան, որը հնարավորություն կտա հաղորդումներ ընդունել Հայաստանից և Կենտրոնից: Այս օրերին հեռուստատեսության և ռադիոյի ամբողջ բեռն ընկած է «Խորհրդային Ղարաբաղ» թերթի վրա, որը պատվով է այն կատարում, բայց, չգիտեմ ինչու, այդ ժամանակվա թերթերը (մարտ, ապրիլ) Հանրապետական գրադարանի արխիվում բացակայում են: Բայց բարեբախտաբար իմ ձեռքի տակ կա 1991թ. մարտի 30-ի «Խորհրդային Ղարաբաղ» թերթը, որտեղ ընթերցում եմ «Ճշմարտությունը Արցախի մասին կամ՝ ինչպես գնդապետ Վ. Յանչենկոն դրժեց իր սպայական խոստումը» վերտառությամբ հոդվածը: Այն ուղղված է ԽՍՀՄ ՆԳՄ մամուլի կենտրոնի ղեկավար Յանչենկոյին և համամիութենական ռադիոհեռուստատեսության կոմիտեի նախագահ Վ. Կրավչենկովին: Հոդվածի տակ 30 000 վետերանների անունից ստորագրել են Մ. Խաչատուրովը և Վետերանների մարզային խորհրդի նախագահ Ա. Բալայանը: Նրանք գրում են, որ ապրիլի 18-ին կենտրոնական հեռուստատեսությամբ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունները աղավաղված են ներկայացվել: Վետերանները պատմում են, որ Յանչենկոն ապրիլի 14-ին եկել էր Ստեփանակերտ՝ Ղարաբաղի մասին ռեպորտաժ պատրաստելու: «Երեք կռան»-ի մոտ կանգնած քաղխորհրդի նախագահ Մաքսիմ Միրզոյանին և քարտուղարի տեղակալ Պետրոսյանին ու մի քանի թոշակառուների մոտենալով՝ հանել է դիկտոֆոնը և խնդրել մի քանի բան ասել, թե ինչպես կարելի է նորմալացնել իրադրությունը մարզում: Մարդիկ համաձայնվել են միայն մի պայմանով. եթե ասվածը հաղորդվի լրիվ և չաղավաղվի, քանի որ հավատը կենտրոնական հեռուստատեսության նկատմամբ կորել է: Նա ազնիվ խոսք է տալիս Ղարաբաղի մասին ասել միայն ճշմարտությունը: Զրուցակիցները հավատում են և պատասխանում հարցերին, որ հարկավոր է մարզից անհապաղ հեռացնել կազմկոմիտեին իր բոլոր բաժանմունքներով, որպեսզի բանակը չծառայի Սաֆոնովին կամ Պոլյանիչկոյին, որոնք իրենց սադրիչ գործունեությամբ խայտառակում են խորհրդային բանակի սպայի անունը: Պահանջում են Ստեփանակերտի օդանավակայանից և մարզի մյուս տարածքներից անմիջապես հանել Ադրբեջանի միլիցիայի հատուկ ջոկատները: Վետերանները գրում են. «Մենք սրտատրոփ սպասում էինք հաղորդմանը՝ մտածելով, որ այս անգամ վերջապես կլսենք ճշմարտության ձայնը»: Եվ ահա ապրիլի 18-ին եթերից լսում ենք հերթական սադրիչ հաղորդումը: Հիմա ուզում ենք հարցնել գնդապետի ուսադիրներով Յանչենկոյին, թե ինչու նա մեզ՝ Հայրենական մեծ պատերազմի վետերաններիս, խաբեց և նույնիսկ առանց ամաչելու եթերից հանել է երեխաների կողմից տրված պատասխանները, որոնք բողոքով ասել են, որ խանութները դատարկ են, չկա հաց, չկա յուղ, դասի գնալու փոխարեն իրենք էլ են օրերով հերթ կանգնում, բայց դատարկ վերադառնում տները:

1991 ապրիլի 24-ին Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահը նամակ է հղել ԽՍՀՄ ղեկավարներին՝ խնդրելով շտապ միջոցներ ձեռնարկել տարածաշրջանի հայ բնակչության պաշտպանության և անվտանգության երաշխիքների ապահովման համար:

1991թ. ապրիլի 30-ին սկսվել էր Գետաշենի և Մարտունաշենի զանգվածային գնդակոծությունը՝ թշնամու կողմից առաջին անգամ օգտագործվելով տանկեր, մարտական ուղղաթիռներ, հրետանի: Մի՞թե սա պատերազմ չէ, որ Կրեմլը չի տեսնում:

Այսօր էլ՝ 30 տարի հետո, Ադրբեջանը շարունակում է 1988թ. փետրվարին սկսած քարային պատերազմը: Հենց նոր Հայաստանի հանրային ռադիոյից լսեցի, որ Սարուշեն-Կարմիր շուկա ճանապարհին ռուս խաղաղապահ ուժերի ուղեկցությամբ տեղաշարժվելիս ադրբեջանական շարասյունից քարկոծել են հայի ավտոմեքենան: Տեղի բնակչությունը ճանապարհը կտրել է և իր վրդովմունքը հայտնել: Ռուս խաղաղապահների հրամանատարները դուրս են եկել մեքենայից, ներողություն խնդրել ու տեղեկություններ վերցրել վնասը հատուցելու համար:

Մտածում ես՝ մինչև ե՞րբ: Այսօր էլ, 2021թ. ապրիլի 12-ին հաղորդվեց, որ ադրբեջանցիները Սարգսաշենից ավտոմատներով և գնդացիրով կրակել են Սարուշենի հանդում աշխատող մեխանիզատորների ուղղությամբ: Այդ լկտիությամբ նրանք խանգարում են գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը: Թուրքերը մեր ճանապարհներով՝ նույնիսկ քարկոծելով, ազատ շարժվում են դեպի Շուշի կամ Քարվաճառ, իսկ մե՞նք...

Նրանք քարկոծել են նաև Լաչինի ճանապարհին վիրավորներ տեղափոխող հայկական շտապ օգնության մեքենան, նույնիսկ Շուշիի ճանապարհին գտնվող մեր «Տանկ» հուշարձանին էլ են վնաս տվել: Մինչև ե՞րբ է այսպես շարունակվելու: Չէ՞ որ այդ քարերը նախօրոք մեքենաներում կուտակել են, նշանակում է՝ նրանք պլանավորած են դիմում նման քայլերի: Նրանք չեն բավարարվել այս պատերազմում խլած ավելի քան 5000 երիտասարդի կյանքով, տիրել են Արցախի մեծ մասին և ներխուժել մեր գյուղերը, խցկվել Շուշի, Հադրութ: Այսքանը դեռ քիչ է, այժմ նրանք մարտի են բռնվել հայկական հուշարձանների, հոգևոր կոթողների հետ և ոչնչացնում են:

Ամբողջ աշխարհը հորդորում է, որ բաց թողնեն Բաքվում գտնվող հայ գերիներին, բայց քանի որ Իլհամի աչքը ունքից բարձրացել է, ոչ ոքի չի լսում: Նույնիսկ ՀՀ վարչապետ կոչեցյալը ապրիլի 7-ին Մոսկվայում հանդիպել է ՌԴ նախագահ Պուտինին և դարձյալ գերիների հարցը բարձրացրել: Պուտինը հանդիպել է նաև Իլհամին, բայց ծաղրանքի պես Բաքվից Երևան է ուղարկվել դատարկ ինքնաթիռ: Զարմանում եմ, ինչո՞ւ մեր լրագրողները բոյկոտի չեն ենթարկում դավաճան Փաշինյանին և իրենց միկրոֆոններն ուղղում են նրան՝ տեղեկություն ստանալու նպատակով:

Մարդ, որ պնդաճակատ՝ հիմա էլ հայտարարում է ապրիլի վերջին հրաժարական տալու և արտահերթ ընտրություններին մասնակցելու մասին, դեռ հույս ու երես ունի, որ պետք է հաղթի: Մի՞թե մեր ժողովուրդն Արցախյան շարժումը սկսելով ու մաքառելով՝ այսպիսի տխուր վիճակ էր ակնկալում: Չեմ կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ մայր Հայաստանի իշխանության ղեկին նստած է Նիկոլ Փաշինյան անունով դավաճանը, որը խայտառակ պարտությունից հետո ավելի քան 5 ամիս է, աթոռին կառչած՝ բաց չի թողնում, իսկ կառավարության անդամներն ու Ազգային ժողովի «Իմ քայլ»-ի պատգամավորները հանդուրժում են և հոտնկայս ծափահարում: Մտածում եմ, եթե հրաշքով Ե. Չարենցը հարություն առներ, կասեր. «Օ՜, հայ ժողովուրդ, ախր քեզ ի՞նչ ասեմ, ախր ինչո՞ւ Սասունցի Դավթի կողքին Նիկոլ Փաշինյան անունով տականք էլ ես ծնել»:

Ես բաց նամակ եմ նրան գրել, բայց այն չի հրապարակվում, ինչո՞ւ արցախյան ԶԼՄ-ները ձեռնպահ են մնում այս դավաճանին խարազանելու գործում: Զարմանում եմ մեր ժողովրդի կամքի ուժի վրա, որ հանդուրժում է նրան: Բայց և այնպես, հույս ունեմ, որ Փաշինյանից հետո եկող իշխանությունը ինչ գնով էլ լինի, կորցրածը Շուշիի հետ ետ է վերցնելու, և մենք Շուշիին կողքից այնքան երկար չենք նայելու, ինչպես մինչև օրս կարոտով նայում ենք Մասիսին:

Մաղլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Թոշակառու ուսուցիչ

ГОСИНСПЕКТОР-УЧИТЕЛЬ

ПОДВИЖНИК РУССКОГО СЛОВА В АРЦАХЕ

29 апреля Рубен Александрович Осипов отмечает свой 60-летний юбилей. Родился в Узбекистане, в интеллигентной семье Александра Хачатуровича, известного в Самаркандской области ветеринарного врача, и медсестры, доброй и светлой женщины - Беллы Бениковны. Но судьбе было угодно, чтобы он приехал в Арцах с особой подвижнической миссией...

Учился в средней школе № 30 имени Крылова г. Самарканда, затем поступил в Самаркандский государственный университет имени Алишера Навои, на филологический факультет. Успешно окончив вуз, стал работать в самаркандской школе №1 имени Абу Али Ибн Сина, поначалу пионервожатым.

"Когда стал преподавать русский язык и литературу, меня сразу пригласили работать в методический отдел образования Сиабского района. Мне было жаль оставлять школу, потому что я как-то сразу прикипел к ней, к коллегам, детям. Через некоторое время пригласили работать в РОНО уже инспектором, но я снова отказался. Приглашали работать директором школы. Но меня всё время тянуло к первой школе, где я начал свою учительскую карьеру и проработал 17 лет", - рассказывает Рубен Александрович.

В этой школе он был секретарём комсомольской организации, председателем профкома, завучем по начальным классам. Затем по указу президента Каримова была учреждена должность заместителя директора по воспитанию духовности и просветительству (сейчас называется "завуч-организатор").

"Очень интересная была работа, постоянно общался с детьми, с учителями, проводил много мероприятий. Почти ежегодно организовывал фестиваль дружбы народов. Кстати, в Узбекистане было особое, очень хорошее отношение к армянам. Вообще, Узбекистан - одно из тёплых, любимых для меня мест, потому что это моя родина, я там родился, причём во втором поколении", - признаётся Рубен Осипов.

Но была и сильная тяга к корням, которая, скорее всего, передалась ему от отца.

"Все члены нашей семьи были армяне, но отец был, если можно так сказать, особый армянин, потому его всегда тянуло на Кавказ, на родину своих предков. Он смог передать эту тягу и мне. В этом смысле я благодарен и своей жене - Осиповой Нелли Варшамовне: она воспитывалась в настоящей карабахской армянской семье, в совершенстве владеет как своим родным, так и русским языком, знает много стихов на обоих языках".

В Степанакерт Рубен Александрович приехал в октябре 2001 года, когда ему уже было за сорок. Несколько месяцев пришлось искать работу. Потом был приглашён в министерство образования в качестве специалиста инспекторского отдела.

"Я сразу почувствовал поддержку руководства и коллег, - рассказывает Осипов, - многое стало получаться. Так, я организовал методическую конференцию на базе степанакертской 8-й школы. Подобная конференция в НКР проводилась практически впервые. Следующие две конференции провёл школе № 3, причём с привле-чением учителей со всей республики. Затем - в 11-й школе, где также трудится много интересных педагогов русского языка. В частной русской школе "Эрудит" организовал семинар с показательными уроками".

Сегодня такие мероприятия, благодаря государственному инспектору, главному специалисту русского языка министерства образования, науки, культуры и спорта НКР Рубену Осипову, стали тради-ционными и охватывают практически всю республику.

"Хочу отметить, что я очень благодарен судьбе за то, что сегодня живу на этой свободной земле, что могу обучить детей языку Пушкина, Толстого и счастлив, что в состоянии чем-то помочь им в жизненном становлении, - уверяет он. - Наши дети ходят в армянскую школу, изучают свой родной язык, могут сохранить и продолжить традиции нашего армянского народа. Это большая победа. А знание русского языка - это для них ещё одна возможность открыть окно в большой мир".

Особо следует отметить традиционно организуемые Рубеном Осиповым под эгидой министерства Дни русского слова, в рамках которых по всей республике проводятся мето-дические конференции учителей русского языка и литературы, открытые уроки, различные конкурсы, в частности на знание культуры и традиций русского народа, творческие вечера различных писателей и т.д. На мероприятия приглашаются известные представители образовательных и общественных кругов Армении и России, писатели и журналисты. Благодаря Рубену Александровичу также стало традицией отмечать День России.

"Я восхищаюсь человеческими качествами Рубена Александровича. С какой любовью он говорит о педагогах, с которыми работает! Как заботится о них! Как предан он педагогической профессии! Все дети для него - его дети. Непрестанно рассказывает об их талантах, сокрушается, что из-за непризнанности республики дети лишены возможности участвовать в международных мероприятиях", - говорит посто-янный участник мероприятий, большой друг Арцаха, ниже-городский поэт Виктор Коноплёв, отмечая при этом, что Рубен Осипов сумел объединить вокруг своих идей уникальных людей, которые понимают его с полуслова и реализуют все его амбициозные планы.

В своей работе Рубен Александрович в первую очередь опирается на учителей школ, которые, по его словам, являются д е й с т в и т е л ь н ы м и хранителями русского языка в Арцахе.

"Они заслуживают самых тёплых слов. Не случайно лучшими учителями года в республике становились преподавательницы русского языка Элеонора Газарян, Алла Аракелян, высокое звание "Заслуженный учитель НКР" получили Вера Хачатрян, Анаит Айрапетян, Жанна Балаян, медалью "Вачаган Благочестивый" награждена Карина Атаджанян... Эти учителя прекрасно владеют и предметом, и методикой преподавания", - говорит он.

Сам Рубен Осипов указом президента НКР Бако Саакяна от 29-го августа 2014-го года был награждён медалью "Вачаган Барепашт" - в связи с 23-летием провозглашения Нагорно-Карабахской Республики и за заслуги, оказанные республике.

Верный своей миссии Рубен Александрович а эти судьбоносные для Арцаха дни вынашивает новые креативные идеи по сохранению и популяризации русского языка и культуры в Арцахе, во благо армянского и русского народов.

"Испокон веков Россия, русский язык, играли важную роль в жизни армянского народа, - говорит он. - В Нагорном Карабахе русская речь никогда не умолкала, поскольку русская культура - неотъемлемая часть нашей духовной жизни. У нас очень тёплое отношение к русской литературе, к традициям русского народа. То тепло, которое проявляется в отношении русского языка в самой России, мы сохраняем и у нас в Арцахе".

Именно благодаря таким людям-подвижникам после развала Советского Союза, когда далеко не во всех новообразованных республиках сохранилось уважительное отношение к "великому и могучему", в Нагорно-Карабахской Республике традиционное почтение к русскому языку и культуре не только сохранилось, но и со временем обретает новые грани и оттенки. И в данном плане Арцах, без преувеличения, может служить примером для многих международно признанных республик...

Напоследок хотел бы отметить, как мужественно и стойко вёл себя Рубен Александрович в драматический период 44-дневной войны, развязанной против Арцаха азербайджано-турецким агрессо-ром. Помимо выполнения своих профессиональных обязанностей он вместе с небольшой группой коллег почти ежедневно помогал разгружать под регулярными ракетными и артиллерийскими обстрелами гуманитарную помощь, столь необходимую для женщин, детей и стариков, ютившихся в подвалах и убежищах. За самоотверженную работу был удостоен благодарственного письма со стороны государственного министра республики.

Пожелаем же Рубену Александровичу сибирского здоровья, арцахского долголетия, семейного счастья и новых творческих идей во благо своей любимой страны!

Ашот БЕГЛАРЯН
Заслуженный журналист НКР

Խոսք երախտագիտության

ԴՊՐՈՑԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԱՆԽՈՆՋ ՆՎԻՐՅԱԼԸ

Լավատեսության հորդաբուխ աղբյուր է Արեգ Ավագյանը:

Ծնվել է 1956թ. մարտի 5-ին Մարտակերտի շրջանի Շահմասուր գյուղում՝ մտավորականի ընտանիքում, ինչն էլ մեծ ազդեցություն է թողել նրա ապագայի վրա:

Ավարտելով տեղի 4-ամյա դպրոցը՝ կրթությունը շարունակել է Ծմակահողի 8-ամյա դպրոցում: Միջնակարգն ավարտել է Վանք գյուղում: Հաճախելով տարբեր դպրոցներ, շփվելով ավելի լայն շրջապատի հետ՝ ընդօրինակել է միայն լավը, դրականը, մարդկայինը: Եվ այդ ամենն իր կյանքի ուղենիշ է դարձրել:

Բուհական կրթությունը ստանում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, և արդեն հասուն ու խոստումնալից մանկավարժը ինտեգրվում է հասարակությանը:

Պարոն Ավագյանը, լինելով մեծատառով մարդ, սիրված և հարգված տնօրեն, բարության խորհրդանիշ, կատարելության ձգտող անհատ, սիրով ու մեծ եռանդով է կատարել իր առաքելությունը: Նա առաջին հերթին հարգանքի արժանի զավակ է, որը մինչև օրս հոգատարությամբ խնամում է իր 90-ամյա մորը: Ջանասեր հայր է, սիրալիր պապիկ, նվիրյալ մանկավարժ և տնօրեն:

Ա. Ավագյանն իր սաներին կրթել ու դաստիարակել է նույն կերպ, որպեսզի ճանաչեն աշխարհի չարն ու բարին, ազնիվն ու գեղեցիկը, ճիշտն ու սխալը՝ բացելով նրանց համար գրականության և ապագայի դռները, տալով նրանց թևեր՝ հոգու ճախրանք զգալու և գիտության նորանոր բարձունքներ նվաճելու: Ապշեցուցիչ եռանդով ու բարությամբ է պարուրված պարոն Ավագյանը: Նրա մեջ ապրում է հրաշալի մարդը, և այդ փորձառությամբ ամուր կանգնած է հայրենի հողում:

Բնակվելով Ստեփանակերտում՝ աշխատում է ծննդավայր Շահմասուրի հիմնական դպրոցում: Շուրջ 15 տարի եղել է դպրոցի տնօրենը, միաժամանակ դասավանդել: Վայելում է աշակերտների, կոլեկտիվի և համագյուղացիների անկեղծ ու անկաշառ սերն ու հարգանքը: Դպրոցի առաջընթացը միշտ գերադասել է անձնականին և մեծ նվիրումով աշխատում է առ այսօր: Նրա ներկայությունը մեծ ուժ է տալիս ժողովրդին, որը նորից վեր է հառնում մոխիրներից:

Այս պատերազմից հետո բոլորի նման ուշքի չի գալիս պարոն Ավագյանը. դեռ այնքա՜ն հարցականներ են մտատանջում հրաշալի մտավորականին...

Մտովի տեսնելով ապագա փոխարինողին՝ մեծատառով մարդ և նույն դպրոցի հրաշալի մանկավարժ, մաթեմատիկայի ուսուցչուհի Լիանա Բաղդասարյանին, նախապատրաստել և մեծ սիրով դպրոցի ղեկավարի իր առաքելությունը փոխանցել է նրան՝ փոխանցելով նաև տիրող համերաշխության, բարության և իր բոլոր այն հիմնական դրական սկզբունքները, որոնք ամրություն, գիտելիք ու հարատևություն են խոստանում մեր փոքրիկ դպրոցին:

Առողջություն և երկարակեցություն ենք մաղթում Ձեզ, պարոն Ավագյան, մեր դպրոցի և գյուղի անմնացորդ նվիրյալ:

«Շահմասուրի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեկտիվ

ՀԱՎԵՐԺ ՓԱՌՔ

ԴՈՒ ԿԱՊՐԵՍ ԱՊՐՈՂՆԵՐԻՍ ՍՐՏԵՐՈՒՄ

Մարտի 31-ին Ասկերանի շրջանի Դաշուշենի հիմնական դպրոցում թախիծ, կարոտ և հպարտություն իրար էին խառնվել: Յուրահատուկ օր էր դաշուշենցիների համար. 24 տարի առաջ այդ օրը ծնվել էր մի մանուկ, որը տարիներ հետո պիտի դառնար գյուղի պարծանքը, իր հերոսական պահվածքով պիտի փառավորեր հոր սիրտը և հավերժ մխացող սպի դառնար առյուծածին մոր հոգում: Գավրուշա Գառնիկի Ավագյանը մնաց հավերժ 23-ամյա ժպտուն և երազկոտ աչքերով երիտասարդ…

Հավաքվել էին Գավրուշայի հարազատները, մարտական ընկերները, ուսուցչական կոլեկտիվն ու համագյուղացիները:

…Հերոսի մեծադիր նկարի մոտ մոմեր էին վառվում, դահլիճը լցված էր աղոթքի խոսքերով առ Աստված և հայրենասիրական ոգով: Դպրոցականները ծաղիկներ խոնարհեցին տղայի հիշատակին և իրենց անմեղ աչքերն ուղղելով Գավրուշայի բարի աչքերին՝ անխոս երդվեցին նրա անունն ու հարազատ կրթօջախի պատիվը բարձր պահել: Աշակերտները ծաղկեփնջեր էին նախատեսել Գավրուշայի մոր և սիրած աղջկա համար: Հարազատի փոխարեն… Պահն այնքա՜ն հուզիչ էր, այնքա՜ն կարոտախառն…

Մինչ միջոցառումն սկսվելը ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին զոհվածների հիշատակը: Հնչեց ԱՀ օրհներգը:

Դպրոցի պատմության ուսուցչուհի Անյուտա Հովսեփյանի խոսքը լցված էր անափ հուզմունքով:

- Դժվար է անցյալով խոսել մեր դպրոցի հպարտություն Գավրուշայի մասին: Նա ընդմիշտ մնաց կապույտ երկնքում՝ ճախրելով հայրենիքի սահմաններում: Նա քաջ գիտակցում էր, թե ուր են տանում ճամփաները և գնաց՝ անտեսելով մահվան սարսուռը, մարտնչեց, ընկավ հանուն հայրենիքի:

Գավրուշա Գառնիկի Ավագյանը ծնվել է 1997 թվականի մարտի 31-ին Ասկերանի շրջանի Դաշուշեն գյուղում: Ավարտելով միջնակարգը՝ նա որոշեց ընտրել բուժակի մասնագիտությունը և ընդունվեց Ստեփանակերտի Թ. Քամալյանի անվան բժշկական քոլեջ: Ընտրած մասնագիտության համար ուներ համապատասխան բնավորության գծեր. աշխատասեր էր, խելացի, նպատակասլաց, նվիրված:

Երբ սկսվեց պատերազմը, Գավրուշան առաջնագծում էր: Հմուտ ռազմաբուժակը կարողացավ փրկել մարդկային կյանքեր. ընկերների վկայությամբ 40-ից ավելի կյանք է փրկել և անմահացել հոկտեմբերի 11-ին՝ Հադրութում:

Համեստության կերպար լուսեղեն տղան հերոսաբար հրաժեշտ տվեց երկրային կյանքին:

Այսօր մեծ ցավ ենք ապրում մենք՝ ապրողներս և ներողություն խնդրում ձեզանից, տղաներ՛…

Երանի՜ այսքան ցավոտ չլիներ մեր հպարտությունը, որ զգում ենք ձեր հանդեպ, երանի՜ հայրենասիրության դաս կազմակերպեինք այսօր, և դուք լինեիք դասավանդողի դերում:

Հազար փա՛ռք ու պատի՛վ, խոնարհվում ենք…

Դպրոցի տնօրեն Ալինա Աղաջանյանը խոր կսկիծով խոսեց Գավրուշայի մասին.

- Մեր փոքրիկ գյուղն ունեցավ անդառնալի և մեծ կորուստ: Կորցրինք մեր Գավրուշային, ցավում ենք մեծով ու փոքրով: Միևնույն ժամանակ հպարտություն ենք զգում, որ կարողացել ենք նման երիտասարդ դաստիարակել: Ռաֆֆու հայրենասիրական ոգին նրա մեջ էր. «Նախ հայրենիք, հետո ծնողներ և սիրած աղջիկ»:

Վերջին անգամ հոկտեմբերի 7-ին եկավ տուն: Տատը թախանձում էր չգնալ: Հաստատակամ Գավրուշան հակադարձում է սիրելի տատին. «Գիտե՞ս, երեկ 30 կյանք եմ փրկել, պետք է գնամ, ինձ սպասում են...»:

Ահա իսկական հերոսի պատասխան: Մենք հպարտանում ենք քեզանով, դու կատարեցիր քո պարտքը հայրենիքիդ հանդեպ և ընդմիշտ փարվեցիր արյունով ներծծված մայր հողին՝ բարձր պահելով հերոսական Դաշուշենիդ անունը:

Շնորհավոր երկնային ծնունդդ, մեր Գավրուշա՛…

Դպրոցականների ելույթներն առլեցուն էին գնահատանքով, հպարտությամբ: Նրանց համար Գավրուշա Ավագյանը իսկական լեգենդ էր, հայրենասիրության չափանիշ: Երեխաները մեծարում էին նաև հերոսի ծնողներին, որոնք այսօր գլխիկոր նստել էին դահլիճում և սփոփվում էին համագյուղացիների հարգալից վերաբերմունքով:

Ելույթներ ունեցան նաև համայնքի ղեկավար Ռուդիկ Ասլանյանը, Ն զորամասի հրամանատար Դավիթ Միրզոյանը, Գավրուշայի ուսուցիչներն ու մարտընկերները:

Յուրաքանչյուրի խոսքն ազդեցիկ էր, անկեղծ: Նրանք շնորհակալ էին միջոցառման կազմակերպիչներին և կրթօջախի բոլոր ուսուցիչներին:

Ու թվում էր, թե Գավրուշան դահլիճում է և բոլորին ուղղելով իր անաղարտ հայացքը՝ ժպտում է ու չի փոշմանում իր քայլերի համար: Նա արեց այն, ինչ պարտավոր էր անել ամեն մի հայ…

ՀԻՇԵՆՔ ԲՈԼՈՐԻՆ ԱՆՈՒՆ ԱՌ ԱՆՈՒՆ

Այգեստանի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում կազմակերպվեց հուշ-ցերեկույթ՝ նվիրված Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված վեց այգեստանցիների հիշատակին:

Արցախյան պատերազմում զոհված 29 ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշավահանակին իրենց պատվավոր տեղը գտան նաև անձնուրաց հայորդիներ Հայկ Արենի Գրիգորյանը, Իգոր Էդուարդի Պողոսյանը, Վիտալի Արտյուշայի Սարգսյանը, Վիտալի Վաչիկի Բալասյանը, Դավիթ Ռուդիկի Ավետիսյանը, Վյաչեսլավ Վահանի Խաչատրյանը:

Անձնվեր մեր տղաները կյանքից առավել սիրում էին Հայրենիքը և պատրաստ էին մեռնել հանուն նրա փրկության:

Համայնքի ղեկավար Միհեր Վանեսյանը, տղաների հարազատները, մարտական ընկերները, ուսուցիչներն ու աշակերտները ծաղիկներ խոնարհեցին հուշավահանակին և մեկ րոպե լռությամբ հարգեցին նրանց հիշատակը:

Դպրոցի տնօրեն Վլադիմիր Վերդյանի խոսքը ցավով էր լցված.

- 2020 թվականի սեպտեմբերի 27-ը սևով պատեց Արցախ աշխարհը: Այդ օրից սկսած մենք զրկվեցինք մեր լավագույն տղաներից, մեր հրաշալի պահապաններից, մեր բզկտված ժողովրդի դարավոր պատմություն կերտող և այդ պատմությունը շարունակող մեր լավագույն տղաներից: Թշնամին նենգ է, բարբարոս, և ցավալին այն է, որ մենք ստիպված էինք ապրել նրա հարևանությամբ ու տարիներ շարունակ պաշտպանել մեր պապական հողը, սակայն, ցավոք, շատ թանկ արժեցավ այն մեզ համար: Զոհվածների մեր վահանակը համալրվեց նոր անուններով, նոր կերպարներով: Մենք կորցրինք մեր աչքի առաջ ծնված ու մեծացած տղաներին: Հիրավի, ճակատագրով դատապարված ենք լինել միշտ պաշտպանը մեր հող ու ջրի, քար ու հանդի…

Այսօր հպարտության ժամն է, և դուք՝ մեր հերոսների հարազատներ, սուրբ վեհությամբ բա՛րձր պահեք ձեր գլուխը, ձեր զավակներն ընկել են քաջի մահով, մարտական առաջադրանք կատարելիս: Բոլորը չէ, որ պատրաստակամ են եղել այդ օրերին, ուրեմն՝ հպարտացե՛ք ձեր որդիներով:

Հազա՛ր փառք նրանց և շնորհակալություն հերոս ծնող բոլոր մայրերին:

Հազա՛ր փառք տարբեր ժամանակներում մայր հողի համար ընկած բոլոր նահատակներին:

Այնուհետև հուշ-ցերեկույթը շարունակվեց դպրոցի դահլիճում: Հպարտությամբ և հայրենասիրությամբ տոգորված դպրոցականները հերոս այգեստանցիներին նվիրված ելույթներ էին պատրաստել: Փոխտնօրեն Մելորա Արզումանյանը, որի աչքի առաջ էին մեծացել այդ տղաներից շատերը, որոնց նա դասավանդել ու հայեցի դաստիարակություն էր տվել, հուզմունքից չէր կարողանում խոսել: Կարոտ, անհուն ցավ իրար էին խառնվել նրա մղկտացող սրտում…

Աշակերտների համար տղաները հերոսներ էին, ընդօրինակման արժանի կերպարներ: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին այգեստանցիներն առանց մեկ վայրկյան անգամ երկմտելու մեկնեցին ռազմաճակատ՝ քաջ գիտակցելով, թե ուր են գնում:

Ավա՜ղ, ոչ բոլորը վերադարձան… Երեխաները գիտակցում էին, որ այդ տղաները իրենց՝ մատաղ սերնդի համար են կյանքը նվիրաբերել, սակայն նրանք չէին հասկանում, թե ինչու է խախտվել բնության կարգը, ինչու է հայրը որդուն դնում գերեզման, իսկ մայրը ծնկները ծեծում հավիտյան: Անարդա՛ր, անօրեն ու դաժան աշխարհ…

Դպրոցականները երդվում են երբեք չմոռանալ տղաներին, սրբորեն պահել նրանց հիշատակը, իսկ նրանց մայրերի համար զավակներ դառնալ, փարատել անասելի ցավը:

Այգեստանի միջնակարգ դպրոցում կազմակերպված միջոցառումն ուներ մեծ խորհուրդ. հուշ-ցերեկույթի կազմակերպիչները և դպրոցականները կարողացան թեթևացնել հերոսաբար զոհված տղաների հարազատների կսկիծը, ինչ-որ չափով սփոփել ու հավաստիացնել, որ նրանց անունները հավերժ կմնան ապրողների սրտերում:

Փա՛ռք ու պատի՛վ բոլոր նահատակներին, փա՛ռք ու պատի՛վ հերոսներ ծնող հայ մայրերին…

Կարինե ԲԱԽՇԻՅԱՆ

ՊԱՏԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 11-ին Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում կայացավ Երևան, Աբովյան և Չարենցավան քաղաքների թիմային սամբոյի բաց առաջնություն, որին 50 կգ քաշայինների մրցաշարում մասնակցեց նաև ԱՀ Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանքի գյուղական համայնքի Տանձուտ գյուղի բնակիչ, 13-ամյա Բորիկ Մուսայելյանը: Նա գրավեց պատվավոր 2-րդ տեղը և արժանացավ արծաթե մեդալի: Բորիկը նաև արժանացավ սամբոյի 50 կգ քաշային կարգում լավագույն հնարքներ կատարողի պատվոգրի:

Պատանին սովորում էր Քաշաթաղի շրջանի Տանձուտի Ադամ Սահակյանի անվան միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում: 2019 թվականին «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից հիմնանորոգվեց նրանց դպրոցը, անվանակոչվեց: Եվ մեծ սիրով էին տանձուտցի աշակերտները հաճախում դպրոց, ուսանում նաև հերոսների դասերը: Սակայն եղավ պատերազմ... Շատ քաշաթաղցիներ մասնակից եղան վերջին կռվին, որպեսզի անառիկ պահեն Արցախյան առաջին գոյամարտում ազատագրված, իրենց շենացրած հայրենի հողը, տունն ու սրբավայրերը: Ունեցանք զոհեր ու անհետ կորածներ, վիրավորներ: Մարտադաշտում հերոսաբար նահատակվեց նաև Բորիկի հորեղբայրը՝ Հայկ Բորիկի Մուսայելյանը, որը գյուղի բոլոր երեխաների սիրելի քեռին էր ու հորեղբայրը: Ունեցանք նաև հայրենիքի կորուստ, ու թշնամուն ենք թողել Ծիծեռնավանքն ու Տանձուտը, և Բորիկը հազարավոր արցախցի երեխաների նման բռնեց տեղահանության ճանապարհը: Նրանց ընտանիքն այժմ բնակվում է Չարենցավանում: Պատանին սամբոյի մարզաձևով զբաղվում է ընդամենը 3 ամիս և նման առաջնության մասնակցում էր առաջին անգամ: Վստահ է՝ հետագայում ավելի մեծ արդյունքների կհասնի այս մարզաձևում և գտնում է, որ առաջին անգամ մասնակցելիս երկրորդ տեղը վատ արդյունք չէ: Նման հաջողությունները մի տեսակ հույս են ներշնչում քաշաթաղցիներիս, որ մեր երեխաները ինչքան էլ ծանր են տանում տեղահանությունը, հայրենիքից հեռանալը, մանկության վայրերի կարոտը, այնուամենայնիվ, պատրաստ են կյանքում առաջ ընթանալ, հասնել հաջողությունների:

Շնորհավորում ենք պատանի Բորիկին, որը կրում է Տանձուտ գյուղն առաջին վերաբնակեցնողներից Բորիկ պապի անունը: Տեղեկացնենք, որ 13-ամյա Բորիկ Մուսայելյանն իր առաջին հաղթանակը նվիրում է Արցախյան վերջին պատերազմում հերոսաբար նահատակված հորեղբորը՝ Հայկ Բորիկի Մուսայելյանին և նրա մարտական ընկերներին:

Վարսենիկ ԸՌՔՈՅԱՆ

ԴԻՄՈՐԴ-2021

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021 թվականի ապրիլի 6-ի N 293 -Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ՝ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՌՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի Հանրապետությանը հատկացվելիք 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով տեղերի ցանկին՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատում եմ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության
ապրիլի 6-ի 2021 թվականի
N 293-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ՝ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՌՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ

Դասիչը	Բուհը, մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը		Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
		Ընդամենը	Այդ թվում? բանակից զորացրված	
	ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			
022801.00.6	*Արևագիտություն*			
	022801.02.6 Թյուրքագիտություն	1		1
023201.00.6	*Լեզվաբանություն*			
	023201.01.6 Թարգմանչական գործ /անգլերեն և հայերեն լեզուներ/	1		1
031801.00.6	*Միջազգային հարաբերություններ*			
	031801.01.6 Միջազգային հարաբերություններ	1		2
032101.00.6	*Լրագրություն*			
	032101.01.6 Լրագրություն	1		1
042101.00.6	*Իրավագիտություն*			
	042101.01.6 Իրավագիտություն	1		
053101.00.6	*Քիմիա*			
	053101.01.6 Քիմիա	1		
	053101.04.6 Սննդի անվտանգություն	1		
054101.00.6	*Երկրաբանություն*			
	054101.01.6 Երկրաբանություն	1		
054201.00.6	*Աշխարհագրություն*			
	054201.01.6 Աշխարհագրություն	1		
061101.00.6	*Ինֆորմատիկա (հանրակրթական գիտություն)*			
	061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	2		2
061901.00.6	*Տեղեկատվական անվտանգություն*			
	061901.01.6 Տեղեկատվական անվտանգություն	2		3
	ԸՆԴԱՄԵՆԸ	*13*		*10*

	ՀԵՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			
061102.00.6	*Օրագրային ճարտարագիտություն*			
	061101.01.6 Օրագրային ճարտարագիտություն	1		1
061103.00.6	*Հանակարգչային ճարտարագիտություն*			
	061103.01.6 Հանակարգչային ճարտարագիտություն	1		1
071301.00.6	*Էներգետիկա*			
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	1		
071302.00.6	*Էլեկտրատեխնիկա*			
	071302.02.6 Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա և էլեկտրատեխնոլոգիաներ	1		
071502.00.6	*Մեքենաշինություն և նյութերի մշակում*			
	071502.02.6 Տեխնոլոգիական մեքենաներ և սարքավորումներ	1		
071506.00.6	*Սարքաշինություն և չափագիտություն*			
	071506.04.6 Չափիչ սարքավորումներ և համակարգեր	1		
072101.00.6	*Պարենամթերքի տեխնոլոգիա*			
	072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա	1		
	ԸՆԴԱՄԵՆԸ	*7*		*2*
	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			
021201.00.6	*Դիզայն*			
	021201.01.6 Դիզայն	1		1
073102.00.6	*Բարեպատիվ տնտեսություն*			
	073102.02.6 Ջերմաազամատակարարում և օդափոխություն	1		
073201.00.6	*Հիդրոտեխնիկա*			
	073201.03.6 Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծում, շինարարություն, կառավարում	1		
	073201.08.6 Շենքերի նախագծում	1		
	073201.10.6 Հիդրոտեխնիկական և հիդրոէներգետիկ կառուցվածքներ	1		
	ԸՆԴԱՄԵՆԸ	*5*		*1*

ՏԵՂԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ				
041401.00.6	***Շուկայագիտություն (մարքեթինգ)***			
	041401.01.6 Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)	1		2
052201.00.6	***Բնապահպանություն և բնօգտագործում***			
	052201.01.6 Բնապահպանություն և բնօգտագործում	1		
056802.00.6	***Ֆինանսական մաթեմատիկա***			
	056802.01.6 Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	1		1
	ԸՆԴԱՄԵՆԸ	***3***		***3***
** Խ. ԱՊՈՒՇԿԻՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**				
011302.00.6	***Դասական մանկավարժություն***			
	011302.04.6 Լոգոպեդիա	1		1
011401?00?6	***Մասնագիտական մանկավարժություն***			
	011401.14.6 Պարարվեստ	1		1
092301.00.6	***Սոցիալական աշխատանք***			
	092301.01.6 Սոցիալական աշխատանք	2		1
	ԸՆԴԱՄԵՆԸ	***4***		***3***
ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ				
023201.00.6	***Լեզվաբանություն***			
	023201.02.6 Միջմշակութային հաղորդակցություն (ըստ լեզուների)	1		1
	ԸՆԴԱՄԵՆԸ	***1***		***1***
ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻ				
021502.00.6	***Կատարողական արվեստ***			
	021502.01.6 Գործիքային կատարողականություն	4		
	021502.04.6 Վոկալ արվեստ	2		1
	ԸՆԴԱՄԵՆԸ	***6***		***1***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ				
021201.00.6	***Գրաֆիկա***			
	021201.04.6 Համակարգչային գրաֆիկա	1		1
	ԸՆԴԱՄԵՆԸ	***1***		***1***
ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ				
021503.00.6	***Ռեժիսորական արվեստ***			
	021503.01.6 Դերասանական արվեստ	1		
021801.00.6	***Կինոյի տեսություն և պատմություն***			
	021801.06.6 Սցենարադրամատուրգիական արվեստ	1		
	ԸՆԴԱՄԵՆԸ	***2***		
ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ				
091201.00.7	***Բուժական գործ***			
	091201.01.7 Բուժական գործ	8	1	7
	ԸՆԴԱՄԵՆԸ	***8***	***1***	***7***
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ				
071602.00.6	***Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ***			
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	1		
081101.00.6	***Ագրոնոմիա***			
	081101.03.6 Ջերմատնային ագրոտեխնոլոգիա	1		
	ԸՆԴԱՄԵՆԸ	***2***		
ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ				
45.03.02	Լեզվաբանություն /թուրքերեն/	1		1
	ԸՆԴԱՄԵՆԸ	***1***		***1***
	ՊԼԱՏՈՒՍՏԱՅԻՆ ՏԵՂԵՐ	***7***	***1***	
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ	***60***	***2***	***30***

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021 թվականի ապրիլի 6-ի N 294-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՌՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասն ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» N 81 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված սոցիալական խմբերի ֆինանսավորումը կատարել Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

4. Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2021-2022 ուսումնական տարվա անվճար տեղերի (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) տասը տոկոսը (առնվազն մեկ տեղ) ըստ մասնագիտությունների հատկացնել պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիներին:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատում եմ՝
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության
ապրիլի 6-ի 2021 թվականի
N 294-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՌՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
011301.00.6	**Մանկավարժություն**		
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	10	20
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**		
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	10	15
	011401.18.6 Պատմություն	10	15
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	10	30
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	10	15
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	10	25
	✱ 011401.24.6 Կենսաբանություն և քիմիա	10	15
	✱ 011401.25.6 Մաթեմատիկա և ֆիզիկա	10	15
031301.00.6	**Հոգեբանություն**		
	031301.01.6 Հոգեբանություն	6	14
041201.00.6	**Ֆինանսներ**		
	041201.01.6 Ֆինանսներ /ըստ ոլորտի/	10	20
041301.00.6	**Կառավարում**		
	041301.01.6 Կառավարում /ըստ ոլորտի/	10	15
042101.00.6	**Իրավագիտություն**		
	042101.01.6 Իրավագիտություն	7	23
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**		
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	10	20
	Պահուստային տեղեր	**30**	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	***153***	***242***

☞ 10

ԴԻՄՈՐԴ-2021

1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն	
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	20
	011401.18.6 Պատմություն	20
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	25
041101.00.6	Հաշվապահական հաշվառում և հարկում	
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	20
053101.00.6	Քիմիա	
	053101.02.6 Դեղագործական քիմիա	20
061101.00.6	Ինֆորմատիկա (հանրակրթական գիտություն)	
	061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	20
	Պահուստային տեղեր	10
	ԸՆԴԱՄԵՆԸ	*135*

2. «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
071403.00.6	Ռադիոտեխնիկա և կապ		
	071403.01.6 Ռադիոտեխնիկա և կապ	5	15
073101.00.6	Ճարտարապետություն		
	073101.01.6 Ճարտարապետություն	10	10
073201.00.6	Շինարարություն		
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	5	10
081101.00.6	Ագրոնոմիա		
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	10	10
084101.00.6	Անասնաբուժություն		
	084101.01.6 Անասնաբուժություն	10	10
	Պահուստային տեղեր	10	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	*50*	*55*

2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
041801.00.6	Ագրոբիզնես	
	041801.01.6 Ագրոբիզնես և ֆինանսներ	20
061105.00.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	15
071301.00.6	Էներգետիկա	
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	15
071601.00.6	Տրանսպորտային հանձնարարներ	
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	20
071602.00.6	Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	15
073201.00.6	Շինարարություն	
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	15
081101.00.6	Ագրոնոմիա	
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	15
	ԸՆԴԱՄԵՆԸ	*115*

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ԼԱՋԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021 թվականի ապրիլի 6-ի N 296-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:
3. Թույլատրել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատում եմ՝
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության
ապրիլի 6-ի 2021 թվականի
N 296-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ,ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԵ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
		Հիմնական կրթությամբ	Հիմնական կրթությամբ
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում	10	10
2202	Տեղեկատվության մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր	10	10
2912	Ջրամատակարարում և ջրահեռացում	10	10
2916	Քաղաքաշինական կադաստր	10	10
3102	Գյուղատնտեսագիտություն	10	10
3104	Անասնաբուժություն	15	5
3106	Գյուղատնտեսության մեքենայացում	15	5
	Պահուստային տեղեր	10	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	*90*	*60*

ՏԵՂԵՐ

2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը		Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը	
		Հիմնական կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ	Հիմնական կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ
0402	Մանկաբարձական գործ	8	-	22	-
0406	Քույրական գործ	8	6	22	24
0418	Բուժական գործ զինված ուժերում	8	-	22	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	*24*	*6*	*66*	*24*

3. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը
0501	Գործիքային կատարողական արվեստ	18	10
	այդ թվում՝ դաշնամուր	6	4
	լարային գործիքներ (ջութակ)	2	-
	փողային գործիքներ	4	4
	ժողովրդական գործիքներ	6	2
0502	Երգեցողություն	3	6
0503	Երգչախմբավարություն	2	1
0504	Երաժշտության տեսություն	1	1
0505	Էստրադային երաժշտարվեստ	1	2
	Պահուստային տեղեր	5	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	*30*	*20*

4. ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

4.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Դասիչը	Մասնագիտությունը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը
		Հիմնական կրթությամբ	Հիմնական կրթությամբ
0514	Դիզայն (ըստ ճյուղերի)	12	3
0515	Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ	10	5
2808	Հագուստի մոդելավորում և նախագծում	13	2
	Պահուստային տեղեր	5	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	*40*	*10*

4.2. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Դասիչը	Մասնագիտությունը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը (միջնակարգ կրթությամբ)
0517	Գրադարանային գործ	15
	ԸՆԴԱՄԵՆԸ	*15*

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը
0319	Պարի ուսուցում (միջնակարգ կրթությամբ)	10
0506	Դասական պար (4-րդ դասարանն ավարտած)	10
	Ժողովրդական պար (8-րդ դասարանն ավարտած)	10
	ԸՆԴԱՄԵՆԸ	*30*

6. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (միջնակարգ կրթությամբ)
2014	Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում	15	-
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում	20	15
2311	Հասարակական սնունդ	20	15
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների)	25	-
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա	15	-
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա	15	15
	Պահուստային տեղեր	10	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	*120*	*45*

7. ՄԱՐՏՈՒՆՈՒ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)
1207	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա	15
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում	15
2311	Հասարակական սնունդ	15
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում /ըստ տեսակների/	15
2704	Գինեգործություն և հյութերի արտադրություն	15
2905	Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում	15
3112	Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում	15
	Պահուստային տեղեր	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	*105*

8. «ԵԶՆԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ» ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)	Անվճար տեղերը (միջնակարգ կրթությամբ)
1002	Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում	15	15
1006	Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում	15	15
1210	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա	15	
2902	Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում	15	15
2907	Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ	15	-
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում	15	-
	Պահուստային տեղեր	5	5
	ԸՆԴԱՄԵՆԸ	*95*	*50*

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

«ՈՎ ԵՄ ԵՍ»-Ի ԳԱՂՏՆԻՔԸ ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ՏԱՃԱՐՈՒՄ Է

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ. Ազգային հիմնախնդիրների լուծման ճանապարհ

Մաս Դ

Սկիզբը՝ «Լուսարար», հ.2-3, 4-5, 6-7



Տեր Մեսրոպ քահանա ԱՐԱՄՅԱՆ

«Այբ» դպրոցի կրթական ծրագրի հեղինակ եւ հոգաբարձուների խորհրդի հիմնադիր նախագահ

Եկեղեցի

Սրբությանն անմաքուր մոտենալուց ի՞նչ ենք շահելու: Միայն վնասելու ենք մեզ: Հավատքի եւ դավանության մասին դատողություններ անելը ի՞նչ իմաստ ունի, եթե դեռ կառչած ենք մեր ներքին անհավատությունից եւ կռապաշտությունից: Հնարավո՞ր է արդյոք դրսից գաղափար կազմել ներսի մասին, եթե մենք մի անգամ չենք բացել դուռը եւ ներս մտել: Բայց մենք հենց այդպես ենք վերաբերվում մեր Եկեղեցուն, որը դարերով եղել է Աստծո ներկայության, սրբության լույսի, հոգեւոր գիտակցության հաստատությունն ու պահապանը մեր ազգային կյանքում: Զբաղվում ենք ամեն տեսակ հիմարությամբ, մեր կյանքը վատնում մոլորությունների մեջ, վազում ամեն տեսակ սին պատրանքների հետեւից եւ համառորեն խուսափում ենք ճշմարտությանը առերեսվելուց: Որովհետեւ վախենում ենք: Որ հանկարծ կհանդիպենք ճշմարտությանը եւ ստիպված կլինենք պատասխանատվություն ստանձնել: Վախենում ենք, որ ստիպված կլինենք հավատքով ապրել եւ հետեւել ճշմարտությանը: Եկեղեցու ներքին իրականությունը հենց ճշմարտության մասին է: Այդ է հաստատում Պողոս առաքյալը՝ Եկեղեցին կոչելով ,ճշմարտության սյուն եւ հաստատություն: Այդ ճշմարտությունը Աստծո սիրո եւ մարդու փրկության, հոգեւոր լույսի եւ ներքին ազատագրման մասին է եւ վեր է այս աշխարհի պիղատոսյան հարցադրումների հարթություններից:

Եկեղեցի իսկապես մտնելու եւ նրա ներքին փրկական ճշմարտությանը հաղորդակից լինելու միակ ճանապարհը հավատքն է: Հավատքից դուրս բոլոր ճանապարհներն այլ տեղ են տանում: Կարիք չկա ,արժեւորելե Եկեղեցին՝ նրա դերը սահմանափակելով սոսկ ազգապահպանական եւ պատմամշակութային գործառույթներով: Կամ հիանալ եկեղեցական ճարտարապետության կամ երաժշտության գեղեցկությամբ, բայց չգիտակցել, որ դրանք արդյունք են հոգեւոր կատարելության փնտրումների: Կամ զմայլվել Նարեկացու խոսքի պերճանքով եւ չաղոթել: Իրական հավատքը ոչ մի կապ չունի սնահավատության, անպտուղ համոզմունքների եւ կույր մոլեռանդության հետ: Հավատքը մարդկային կյանքի մեծագույն պարգեւն է եւ հիմնարար զորությունը: Մենք հավատքով ենք ապրում, իսկ առանց հավատքի պարզապես գոյատեւում ենք: Հավատքից են ծնվում սրբությունը, ազատությունը եւ ստեղծարարությունը:

Ուրեմն հավատքով բացենք Եկեղեցու դուռը եւ ներս մտնենք: Այնտեղ մեզ են սպասում ոչ միայն հիմա, այլեւ՝ դարերով: Սպասում են Տերը եւ Նրա զորությունները, երկնավոր սուրբերը եւ մեր երկրավոր դավանակիցները: Եկեղեցին հավաքում է մեզ որպես Աստծո ժողովուրդ: Եկեղեցի բառը գալիս է հունարեն «էկլեզիա» բառից եւ նշանակում է հավաք, ժողով կամ ժողովուրդ: Եկեղեցին մեզ հավաքող, ժողովող, ժողովուրդ եւ ազգ դարձնող զորությունն է: Եվ մեր հավաքվելը ունի հիմք, իմաստ եւ նպատակ: Հիմքը հավատքն է, իմաստը՝ փրկությունը, նպատակը՝ աստվածացումը: Այդ փրկական հավաք-էկլեզիան Սուրբ Գիրքը ներկայացնում է որպես Քրիստոսի խորհրդական (միստիկ) մարմին կամ Աստծո թագավորության երկնային տաճար, իսկ հավատացյալները այդ մարմնի անդամներն են կամ տաճարի կենդանի քարերը: Քարերից կառուցված նյութական տաճարը աննյութական Եկեղեցի-տաճարի նշանակն է:

Աստված Եկեղեցու միջոցով հավաքում է իր զավակներին, Իր սրբազան շնորհաբաշխություններով կերակրում ու զորացնում նրանց, սիրո շաղկապով կապում միմյանց հետ եւ եկեղեցացնում մեզ: Եկեղեցին մեր հոգեւոր մայրն է: Ինչպես մարմնով ենք մեկ անգամ ծնվում, այնպես էլ մեկ անգամ ծնվում ենք հոգով Եկեղեցու սբ Ավազանից: Եկեղեցին՝ որպես մայր, պահապանն է իր զավակների եւ անընդհատ աղոթում է նրանց համար, թեպետ մարդիկ միշտ չէ, որ գիտակցում եւ զգում են դա: Եկեղեցու կենդանի ներկայությունը մեր կյանքում փրկում է մեզ հոգեւոր որբությունից: Որքան էլ մարդիկ հեռանան կամ օտարանան Եկեղեցուց, նրանք միշտ վերադառնալու հնարավորություն ունեն, որովհետեւ Եկեղեցին միշտ իր տեղում է: Մեր հասարակության՝ իր գաղափարական որբության զգացողությունից ազատվելու միակ ճանապարհը Եկեղեցի վերադառնալն է: Մեր միասնականությունը խաթարված է, միասին մտածել եւ արարել չգիտենք, որովհետեւ որպես հասարակություն եկեղեցացած չենք: Եկեղեցին նաեւ մեզ է հավաքում ներքնապես, մարդ դարձնում եւ տաճարացնում այս շեղումներով լի աշխարհում: «Ով եմ ես»-ի գաղտնիքը մեր ներքին տաճարում է: Եկեղեցում լինել կամ Եկեղեցունը լինել նախ եւ առաջ նշանակում է եկեղեցանալ ներքին աստվածպաշտությամբ, սրտի ներքին տաճարում մեր պատարագը մատուցել մեզ համար պատարագված Տիրոջը:

Քրիստոնեությունը՝ որպես կյանքի արժեքային հիմք եւ հոգեւոր ազատագրման ճանապարհ, իր էությամբ վերազգային է եւ համամարդկային: Սակայն ժամանակի մեջ նրա կայացումը եւ գոյությունը ազգային է եւ ունի իր առանձնահատկությունները: Ազգայինի եւ համամարդկայինի այս միասնությունը ընձեռում է թե՛ մեծ պատկերի մաս կազմելու առավելություն, թե՛ սեփական ինքնությունը իմաստավորելու հնարավորություն: Մեր Եկեղեցին առանձնանում է իր ուրույն դավանաբանությամբ, որի սիրտը քրիստոսաբանությունն է: Հիսուս Քրիստոսի նկատմամբ ճշմարիտ հավատքը, ըստ Եկեղեցու, փրկության հիմքն է, եւ Աստծուն հետեւող յուրաքանչյուր ազգի կարելի է բնորոշել նրա քրիստոսաբանական իդեալով: Հայ Եկեղեցու քրիստոսաբանական համակարգը արեւելաքրիստոնեական հոգեւոր ժառանգության մեծագույն գանձն է: Մենք անընդհատ պայքարել ենք մեր հավատքի մաքրության համար եւ իրավամբ համարում ենք, որ պահպանել ենք առաքելական ակունքներից սերող հավատքի մի անաղարտ գիծ: Ահա թե ինչու մեր Եկեղեցու համառոտ անվանման մեջ շեշտում ենք այդ կարեւոր առանձնահատկությունը եւ համարում, որ մեր հավատքը առաքելական է, եւ մենք առաքելական ազգ ենք: Եվ առաքելականությունը ոչ միայն հոգեւոր ծագումնաբանություն է, այլեւ կենդանի առաքելություն, որը կոչված ենք իրականացնելու այսօր:

Մեր դավանական հիմքի վրա ձեւավորվել է մի եզակի հոգեւոր-ազգային մշակույթ: Մեր եկեղեցական ճարտարապետությանը բնորոշ չէ աստվածայինի անհասանելիությունը եւ մարդու ոչնչությունն ընդգծող վերամբարձ մոնումենտալիզմը,գընդհակառակը՝ մեր եկեղեցիներում երկնային վայելչությունն ու մարդկերպ համամասնությունները ներդաշնակորեն միաձուլված են՝ հարազատորեն մարմնավորելով Աստծո մարդեղության խորհուրդը: Մեր հոգեւոր երաժշտության մեջ երկնային վեհությունը եւ մարդկային ջերմությունը խորհրդաբար միավորված են՝ որպես աստվածայինի եւ մարդկայինի միության խորհրդանիշ: Իսկ մեր լեզուն իսկապես աստվածային գաղտնիք ունի իր մեջ: Եվ պատահական չէ, որ այդ լեզուն երկնային թռիչքի թեւեր է ստացել սբ Գրիգոր Նարեկացու «Մատյան»-ի շնորհիվ, որ աղոթքի ամենամեծ ստեղծագործությունն է մարդկության պատմության մեջ: Աղոթքը խոսքի բարձրագույն սուրբ վիճակն է, իսկ խոսքը՝ մարդու աստվածանմանության նշանակը: Որովհետեւ Աստծո միածին Որդին՝ Աստծո Խոսքը, դարձավ մեզ նման մարդ: Այս հոգեւոր ժառանգության կենդանի կրիչը դառնալու համար մենք պետք է տեսնենք եւ գիտակցենք այդ ամենը սնուցող եւ միասնության մեջ պահող հավատքի զորությունը եւ դավանական ամրությունը: Ազգի էությունը նրա հավատքի հիմնական կողն է: Ազգը՝ որպես հոգեղեն ուժ, պարզապես հավաքական հավատք է: Այս առումով Հայ Եկեղեցին մեր ինքնության պահապանն է: Սա ենթագիտակցաբար ընդունում են շատերը, եւ ոմանք, անգամ տարրական պատրաստություն չունենալով, փորձում են «պաշտպանել» Եկեղեցին «հարձակումներից»: Սակայն Եկեղեցին պաշտպանել հնարավոր չէ, որովհետեւ նա՛ է մեզ պաշտպանում, իսկ «հարձակվողը» մարտնչում է ինքն իր դեմ: Մենք պարզապես ինքներս մեզ տեսնելու եւ գտնելու կարիք ունենք: Եվ հենց գտանք մեզ, կտեսնենք, որ Եկեղեցու գրկում ենք:

Հայ Եկեղեցու մյուս կարեւոր առանձնահատկությունը կրթության նկատմամբ վերաբերմունքն է: Եկեղեցին հիմնել եւ դարերով իր սրտում է պահել հայ դպրությունը: Ե դարից սկզբնավորված սբց Թարգմանչաց շարժումը դարձավ հայ ժողովրդի ճանաչողական, արժեքային եւ մշակութային ամբողջականությունը ապահովող առանցքը: Մենք նվիրականացրել ենք թարգմանության գաղափարը եւ սբց Թարգմանչաց հատուկ տոն սահմանել՝ որպես մեր ինքնության կարեւոր վկայություն: Մենք համարել ենք, որ թարգմանությունը արվեստների արվեստ է, որ աստվածային անեղ իմաստները հասանելի է դարձնում հողեղեններիս: Թարգմանիչը Աստծո թարգմանն է կամ խորհուրդների մեկնիչը: Թարգմանությունը նաեւ համամարդկայինի նկատմամբ բաց լինելու, մեծ պատկերի մաս կազմելու, լավագույնը վերցնելու եւ սեփականը ստեղծելու կարողությունն է: Կրթությունը լայն իմաստով թարգմանություն է, մենք անընդհատ պետք է թարգմանենք, մեկնենք, իմաստավորենք որոշակի իրողություններ: Անցյալը՝ որպես հիմք, թարգմանության կարիք ունի, իսկ առանց ապագան թարգմանելու՝ ներկան իմաստազրկվում է: Մեր ինքնության եւ ազգային առաքելության միջուկը, իմ խորին համոզմամբ, աղերսված է թարգմանության խորհրդի հետ: Եթե մարդկությունը ինչ-որ արժեքներ կորցնում կամ մոռանում է, մեկը պիտի լույսի եւ ճշմարտության թարգման լինի: Բայց մեծին հասու լինելու համար փոքրի մեջ պիտի հավատարիմ լինել: Ամեն ինչ սկսվում է սեփական կրթության նկատմամբ հարգանքից եւ պատասխանատվությունից: Տալ կարող է նա, ով ունի:

Մենք արդեն երկար ժամանակ է՝ շուրջ վեց հարյուր տարի, որեւէ մեծ փայլատակում չենք ունեցել աստվածաբանության եւ կրոնափիլիսոփայության անդաստանում: Հայ աստվածաբանական մտքի եւ հոգեկեցության վերջին խոշորագույն ներկայացուցիչը սբ Գրիգոր Տաթեւացին է: Վանական մեծ դպրոցները՝ որպես հոգեւոր իդեալների եւ մշակույթի հունցման եւ բյուրեղացման օջախներ, սկսեցին կորցնել իրենց ուժն ու ազդեցությունը եւ այնուհետեւ իսպառ անհետացան մեր կյանքից: Ինչո՞վ է պայմանավորված այս մեծ հոգեւոր լռությունը, եթե չասենք՝ ամլությունը: Այդ շրջանը համընկնում է օսմանյան կայսրության ժամանակաշրջանի հետ, որի աղետալի ազդեցությունները մեր մշակույթի եւ անգամ լեզվամտածողության վրա ակնհայտ են: Սակայն թե ինչու է մեր հոգեւոր անդաստանը չորացել եւ ինչպես է մեր ներքին պաշտպանական համակարգը կոտրվել, առանձին ուսումնասիրության կարիք է զգում: Իսկ վերջին երկու հարյուր տարին գաղափարական գայթակղությունների եւ մոլորութիւնների ժամանակաշրջան էր, եւ մենք անպաշտպան նետվեցինք աշխարհակործան փորձությունների եւ փորձարկումների հորձանուտը: Մենք վերջնականապես արմատախիլ եղանք մեր արմատներից, եւ «հոգեւոր հայը» լքեց պատմության ասպարեզը: Մեծ իդեալների պատմություն վերադառնալու հույսը մնաց որպես ապագայի խնդիր: Հիմա մեր սերունդը կանգնած է մի մեծ հոգեւոր անդունդ հաղթահարելու հրամայականի առջեւ: Իսկ մենք արդյո՞ք կենտրոնացած ենք, թե՛ ճշմարտությունը գտնելու պատասխանատվությունը սիրով թողնում ենք մեր երեխաների վրա:

Մեր հոգեւոր ինքնագիտակցության եւ ազգային նպատակների փնտրումների մեջ հոգեւորականության դերն առանցքային է: Իսկ ո՞վ է հոգեւորականը: Սա մեծ հարցականն է մեր սերնդի, որ խնդիրների մեջ խորանալու կարողություն եւ ցանկություն չունի: Մենք անընդհատ չափչփում եւ մեծամտաբար թիրախավորում ենք հոգեւորականներին՝ առանց խորհելու, որ մեր չափման միավորները եւ գործիքները ամենեւին չեն համապատասխանում տվյալ խնդրին: Մեր աչքի գերանը չտեսնելով՝ ուզում ենք հայտնաբերել ուրիշի աչքի շյուղը: Կամ եթե չենք աղոթում կամ ընդհանրապես չգիտենք, թե ինչ է աղոթքը, ինչպե՞ս պիտի հասկանանք աղոթողին, առավել եւս՝ աղոթքի սպասավորին: Իսկ աղոթող մարդը ազգի խիղճն ու պահապանն է: Գիտակցո՞ւմ ենք, որ մեր գոյությունը կախված է նրա աղոթքներից: Բոլոր ասպարեզներում էլ կլինեն մարդիկ, որոնք չեն համապատասխանում իրենց կոչմանը: Սակայն դրանից տվյալ ասպարեզի կարեւորությունը չի նվազում: Իսկ խոսքը ոչ թե ինչ-որ մասնագիտական ոլորտի մասին է, այլ սրբության: Եկեղեցին սրբություն է եւ մեր հավատքի նվիրական հաստատությունը: Հոգեւորականը այդ սրբության խորհրդանիշն է եւ փոխանցողը: Անկախ նրանից, թե նա հոգեւոր ինչ մակարդակում է գտնվում, Աստված իր ժողովրդին չի զրկում իր շնորհների փոխանցականությունից: Ուրեմն հոգեւորականը փոխանցում է մի բան, որի սեփականատերն ինքը չէ: Սա տեղի է ունենում ձեռնադրության շնորհով, որը աստվածային սրբությունները զերծ է պահում մարդկային աղավաղումներից: Հոգեւորականին կարող է տեսնել եւ գնահատել միայն հոգեւոր մարդը, որն ունի նաեւ ավետարանական զգուշացում՝ «Մի՛ դատիր, որպեսզի չդատվես»: Առողջ հասարակությունը պետք է ունենա որոշակի սահմաններ, որոնցից անդին լռությունը գերադասի խոսելուց: Մեր ազգի հզորությունը ուղղակի կախված է հոգեւորականներից: Նրանց պետք է աջակցել եւ զորակցել, նրանց համար պետք է աղոթել: Եթե մենք ունենք սրբության իդեալ, սրբության մեջ պտուղ ենք տալիս եւ ուզում ենք նվիրյալ հոգեւորականություն ունենալ, անպայման կունենանք: Սակայն չմոռանանք, որ հունձքի Տերը աշխատում է: Եվ երբեմն մենք հնձում ենք այն, ինչ չենք սերմանել: Այս պատերազմի օրերին որտե՞ղ էին մեր հոգեւորականները: Մեր զինվորների կողքին, մեր զավակների հետ: Այսպիսին է մեր Եկեղեցու վկայությունը այսօր եւ միշտ: Եկեղեցին դարերով մեզ հավաքել եւ ամրացրել է, մաքրել եւ լուսավորել, կրթել եւ զորացրել: Եկեղեցին մեզ դարձրել է ազգ եւ Աստծո ժողովուրդ: Ժամանակն է բացելու մեր աչքերը եւ նայելու ճշմարտությանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՉՆԱՀԱՆՋԵԼ ԿՅԱՆՔԻ ՄԱՐՏԱՇՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌԱՋ. ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Լուսարար»-ի մարզական էջը հյուրընկալեց Արցախում պարապող, արտերկրում տարբեր մրցաշարերի մասնակցող՝ ակտիվ ու նպատակասլաց մարզիկ Հայկ Խաչատրյանին: Մեզ հետ զրույցում հատկապես բացահայտվեց սպորտի ու հայրենիքի հանդեպ նրա ունեցած սերն ու նվիրումը, որոնց առջեւ նահանջում են հայրենիքում մնալու եւ սպորտով զբաղվելու ճանապարհին հանդիպող բոլոր խոչընդոտները:

Ծնվել է 1995թ. փետրվարի 23-ին Ստեփանակերտում: Սովորել է Ստեփանակերտի 2-րդ դպրոցում: Ավարտել է 11-րդ ավագ դպրոցը: Զինվորական ծառայությունն ավարտելուց ու զորացրվելուց հետո ավարտել է ԱրՊՀ ֆիզկուլտուրա եւ նախնական զինվորական պատրաստություն բաժինը: Սպորտով պարապել սկսել է 4 տարեկանից: Իրեն լավագույնս դրսեւորելով թաեքվոնդո, ապա մուայ թայ մարզաձեւերում՝ մասնակցել է տարբեր մրցաշարերի: Թաեքվոնդո մարզաձեւում բազմիցս հռչակվել է ՀՀ չեմպիոն: 2012թ. մասնակցել է Վիետնամում կայացած Թաեքվոնդոյի աշխարհի առաջնությանը եւ զբաղեցրել երրորդ մրցանակային տեղ: 2013թ. մասնակցել է Մեքսիկայում կայացած մեծահասակների աշխարհի առաջնությանը եւ զբաղեցրել հինգերորդ տեղ: 2011թ. Եվրոպայի Թաեքվոնդոյի 18-21 տարեկանների միջեւ կայացած առաջնության արծաթե մեդալակիր է: 2014թ. Իրանում (Թեհրանում) կայացած Թաեքվոնդոյի միջազգային A կարգի DAEFARGE մրցաշարում, որին մասնակցում են տարբեր պետություններ ներկայացնող հզոր մարզիկներ, հաղթող է ճանաչվել:

2015թ.-ից սկսել է պարապել մուայ թայ: ՀՀ երկակի չեմպիոն է: ՀՀ Կա-1 մարզաձեւի չեմպիոն է: 2016թ. մասնակցել է մուայ թայի աշխարհի առաջնությանը: 2016թ. օգոստոսի 1-ին Արցախում («Վալեքս գարդեն»-ում) կազմակերպված REAL FIGHT-1 պրոֆեսիոնալ մենամարտերի մրցույթում մուայ թայ մարզաձեւով հաղթող է ճանաչվել:

2021թ. մարտի 12-ին Երեւանում կայացած ՀՀ մեծահասակների թաեքվոնդոյի առաջնությանը մասնակցելու էին գնացել նաեւ արցախցի չորս մարզիկներ, որոնցից միայն Հայկ Խաչատրյանին է հաջողվել հաղթողի կոչմանն արժանանալ: Արդյունքում Հայկը պատրաստվում է մեկնել Բուլղարիա եւ ապրիլի 8-13-ը մասնակցել Եվրոպայի թաեքվոնդոյի առաջնությանը:

- Հայկ, որտեղի՞ց է Ձեզ այդքան նվիրում ու եռանդ սպորտի հանդեպ, մանավանդ երբ, ինչպես տեղեկացանք, ավելի շատ ինքներդ եք Ձեզ մարզում:

- Հավանաբար, իմ ծնողների շնորհիվ եւ Աստծո օգնությամբ: Դեռ չորս տարեկան էի, որ հայրս ինձ տարավ թաեքվոնդոյի խմբակ: Այդ մարզաձեւն ինձ դուր եկավ մանուկ հասակից: Սկսեցի պարապել մարզիչ Արայիկ Մկրտչյանի մոտ: Տարիներ շարունակ մարզվելով՝ սկսեցի նաեւ մրցաշարերի մասնակցել: Եկավ պահ, երբ չէի բավարարվում միայն մարզչի հրահանգներով ու սկսեցի ավելի շատ ինքնակատարելագործմամբ զբաղվել: Որոշեցի ուժերս փորձել նաեւ ուրիշ մարզաձեւում եւ 2015 թվականից սկսեցի մուայ թայ պարապել մարզիչ Գարեգին Աղաբալյանի մոտ: Իմ մարզիչներից շատ բան եմ սովորել, բայց ավելի շատ նախընտրում եմ ինքս ինձ վրա ինքնուրույն աշխատել: Այն համոզմունքը, որ տղան պետք է ուժեղ լինի, պարապած ու ոգով ուժեղ, ինձ փոխանցվել է իմ ծնողներից: Ես չեմ դադարում զբաղվել սպորտով. կատարելագործել կամք ու միտք՝ անկախ հանգամանքներից ու հանդիպող դժվարություններից:

- Փաստորեն պարապում եք ինքներդ Ձեզ համար՝ սիրողական, բայց նաեւ պրոֆեսիոնալ մրցաշարերի եք մասնակցում: Պրոֆեսիոնալ մարտերը պահանջում են քաշի նվազեցում, ավելի շատ ջանք ու հաստատակամություն: Ինչպե՞ս է դա անդրադառնում Ձեր առողջության վրա:

- Սպորտում առաջնահերթը առողջությունն է: Եթե քաշի նվազեցումը խելամիտ մոտեցմամբ չկատարվի, ամենայն հավանականությամբ առողջությանը վնաս կհասցվի: Դա անթույլատրելի է: Բացի դրանից, սխալ է կարծել, թե հաղթանակը տրվում է միայն քաշը նվազեցնելու դեպքում: Մարտում կռվում ու հաղթում են ոգու հաշվին, ոչ թե քաշը նվազեցնելով: Ինձ համար առաջնահերթն առողջությունն է: Դիետաները, սննդակարգը փոխելը, ակտիվ ու ինտենսիվ մարզումները միտված են խելամտությամբ վերահսկվելուն:

- Թաեքվոնդո եւ մուայ թայ մարզաձեւերը ավելի շատ նմա՞ն են, թե՞ տարբեր:

- Ավելի շատ տարբեր են: Թաեքվոնդոն կորեական մարտարվեստ է, որի առանձնահատկություններից է մարտում ոտքերի ակտիվ օգտագործումը, ընդ որում, ինչպես հարվածների համար, այնպես էլ պաշտպանական գործողությունների: Թաեքվոնդոն հոգեւոր մարզումների համակարգ է ու առանց զենքի ինքնապաշտպանություն՝ առողջության հետ համատեղ: Թաեքվոնդոն օլիմպիական մարզաձեւ է, ինչն ավելի շատ է այն գրավիչ դարձնում մարզիկների համար: Մրցույթների ժամանակ մարզիկները պաշտպանիչ զրահ են օգտագործում: Մուայ թայը թայլանդական մարզաձեւ է, այն համարվում է ութ վերջույթների մարտ, որն ընթանում է մոտիկ տարածության վրա բաց վերջույթներով, այսինքն՝ առանց պաշտպանիչ զրահի:

- Հայկ, ինքներդ ծառայում եք անվտանգության համակարգում, մասնակցել եք 44-օրյա պատերազմին: Ինչպե՞ս է ազդում սպորտով պարապած լինելը պատերազմում:

- Դա օգնում է մարդուն կյանքի ցանկացած ոլորտում, իսկ պատերազմում կռվող զինվորի համար սպորտով պարապած լինելն ուղղակի անհրաժեշտ է: Կարեւոր է, որ հատկապես տղա երեխաները դեռ փոքր հասակից սկսեն պարապել սպորտով, մանավանդ մենամարտային մարզաձեւերով: Ինչպես նշել եմ, օրինակ, թաեքվոնդոն, բացի նրանից, որ զարգացնում է ֆիզիկական ուժը, ձեւավորում է հարվածների եւ պաշտպանության հմտություններ, նաեւ հոգեբանորեն է կոփում մարզիկին: Պարապմունք առ պարապմունք դուրս են նետվում հոգեբանական բացասական տարրերը, վախերը: Մուայ թայն ընդհանրապես վնասվածքավտանգ մարզաձեւ է եւ գրավում է շատերին հենց դրանով: Պարապմունքների ընթացքում սովորում ես չվախենալ վնասվածքներից, դառնում ես դիմացկուն: Հոգեբանական պատրաստությունը մեծ նշանակություն ունի պատերազմում: Սպորտով պարապած մարդկանց մոտ բարոյահոգեբանական պատրաստության մակարդակը բարձր է: Նման մարդկանց համար պատերազմն ու մահն էլ չեն սարսափելի. պարզապես պաշտպանում ես հայրենիքդ, հարազատներիդ, հարկ եղած դեպքում՝ զոհելով կյանքդ:

- Պատերազմի թոհ ու բոհով անցնելուց հետո հավանաբար հեշտ չէր վերադառնալ մարզումներին, մրցույթի մասնակցել եւ հաղթել:

- Իհարկե, դժվարություններ կային, հատկապես որ թարմ են վերքերը: Պատերազմի սթրեսներից հետո դժվար է վերադառնալ նորմալ կյանքի: Այնուամենայնիվ, չպետք է նահանջել: Պետք է արժանի հակահարված տալ կյանքի մարտահրավերներին եւ հաղթող դուրս գալ:

- Մտածո՞ւմ եք Արցախում մարզչական գործունեություն ծավալելու ուղղությամբ:

- Այո, մտածում եմ եւ որոշ ծրագրեր արդեն ունեմ: Առայժմ մտածում եմ Օլիմպիադային մասնակցելու մասին եւ այդ ուղղությամբ մրցույթների եմ մասնակցում: Հետագայում ուզում եմ թաեքվոնդոյի խմբակ բացել Արցախի երեխաների եւ հատկապես նախազորակոչային տարիքի տղաների համար: Առաջին հերթին մենք պետք է ունենանք առողջ սերունդ: Ապրելով մեր տարածաշրջանում՝ մենք պետք է պատրաստ լինենք ցանկացած իրավիճակի: Եթե նույնիսկ բացառենք կրկին պատերազմ լինելու հավանականությունը, մեր ազգին պետք են ամուր տղաներ՝ առողջ հոգով, բարձր ոգով, ինքնապաշտպանվել կարողացող: Բոլորն էլ պարտավոր են մարզվել: Այնուհետեւ կարելի է մտածել նաեւ սպորտային կարիերայի, մրցումների մասին: Պետք է անընդհատ փնտրել հնարավորություններ կոփվելու համար: Կարելի է այցելել տարբեր ակումբներ, գտնել լավ մարզիչ, խորհրդակցել եւ ընտրել համապատասխան մարզաձեւ: Իսկ այն մարդիկ, ովքեր ուզում են ինքնուրույն պարապել, հոգ չէ: Եթե կա ցանկություն եւ մոտիվացիա, ուրեմն ամենուրեք հնարավորություն էլ կա:

ԿՐՏՍԵՐ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԵՎ ՄՐՑԱՇԱՐԵՐԸ

Հայտնի է, որ այն երեխաները, ովքեր մասնակցում են խմբային կամ անհատական սպորտի, ստանում են առավելություններ: Ընդհանուր առմամբ նրանց մոտ բարձրանում են ինքնագնահատականը, ինքնավստահությունը եւ ուրիշների հետ աշխատելու ընդունակությունը: Բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել, որ կազմակերպված մարզական առաջնություններին մասնակցող երեխաներն ավելի քիչ հակում ունեն դեպրեսիվ վիճակներում հայտնվելու: Զբաղված երեխան չի կարող ընկնել տհաճ իրավիճակի մեջ: Դեռահասությանը բնորոշ անցանկալի երեւույթների արտահայտումները նվազում են ֆիզիկական ակտիվության աճման եւ սպորտում մասնակցություն ունենալու հետ: Ինչպես նաեւ այդ երեխաների մոտ հղկվում են ժամանակը ճիշտ օգտագործելու հմտությունները: Առողջության համար օգտակար ֆիզիկական ակտիվության հետ հաճախ կոչ է արվում որեւէ սպորտաձեւով զբաղվել: Մարզվող եւ մրցույթների մասնակցող երեխաների ու պատանիների մոտ լավ կազմվածք է ձեւավորվում, բարելավվում են ոսկրային համակարգը, սիրտ-անոթային համակարգը: Հավանաբար նրանք շարունակելու են պարբերաբար մարզվել նաեւ հասուն տարիքում՝ պահպանելով առողջության լավագույն մակարդակ:

Բացի ամուր կեցվածք եւ առողջ մարմին ունենալուց, մրցաշարերի մասնակցող մարզիկները նաեւ այլ կողմերով են զարգանում: Թեմայի շուրջ զրույց ունեցանք վինգչունի մարզիչ Սայաթ Բաղդասարյանի հետ, որից էլ տեղեկացանք, որ մարտի 19-20-ը Երեւանում կայացած ՀՀ ավանդական ուշուի էրեբունի համայնքի ակումբային մրցաշարին մասնակցելու էին գնացել Վինգչունի եւ թայչիի ֆեդերացիայի կրտսեր մարզիկներ Արամե Պետրոսյանը, Ռաֆայել Բաղդասարյանը, Վլադիմիր Ծատրյանը: Ֆեդերացիայի գլխավոր մարզիչ Սայաթ Բաղդասարյանի սաները մրցաշարից վերադարձել են հաղթանակով եւ մրցանակային տեղերով: Վինգչուն մարզաձեւից

սիու նիմ տաո վարժահամալիրից Արամե Պետրոսյանը հաղթող է ճանաչվել, Ռաֆայել Բաղդասարյանը զբաղեցրել է 2-րդ, իսկ Վլադիմիր Ծատրյանը՝ 3-րդ տեղ: Սանդա մենամարտային մարզաձեւից Արամե Պետրոսյանը 9 տարեկանների միջեւ 31 կգ քաշային կարգում զբաղեցրել է 3-րդ տեղ: Ռաֆայել Բաղդասարյանը 9 տարեկանների միջեւ 34 կգ քաշային կարգում զբաղեցրել է 3-րդ տեղ:

Մարզչի խոսքով՝ մարզիկի կյանքում մրցաշարին մասնակցելն անփոխարինելի եւ կարեւոր նշանակություն ունի: Անկախ նրանից՝ մարզիկը ցուցադրական կոմպլե՞քս է կատարում կամ մարտի՞ է մասնակցում մրցաշարի ժամանակ, նրա մոտ կատարվում են մի շարք գործընթացներ: Մրցաշարն իրական քննություն է թե՛ մարտարվեստին տիրապետելու աստիճանը տեսնելու, թե՛ ֆիզիկական եւ հոգեբանական պատրաստվածությունը ստուգելու: Մրցաշարերի մասնակցելով՝ մարզիկն ավելի շատ է զարգանում, քան միայն մարզադահլիճ այցելելով: Անկախ նրանից՝ մարզիկը մրցանակային տեղ է գրավում թե ոչ, այնուամենայնիվ, մրցաշարի ժամանակ բացահայտվում է նրա ներքին պոտենցիալը: Նախօրոք չիմանալով ինչ կարգի մրցակիցներ կունենա, մարզիկը նաեւ հմտություններ է ձեռք բերում՝ անծանոթ միջավայրում մարտնչելու իր համար անսովոր մրցակցի հետ: Բացի դրանից, հենց մարտի ժամանակ նրա մոտ կարող է ձեւավորվել նոր մարտավարություն: Դրա համար մարզիչը մեծ ուշադրություն է դարձնում մրցաշարերին եւ ձգտում է ավելի շատ մարզիկներ պատրաստել առաջնություններին մասնակցելու համար: Առաջիկայում մտադիր են Վինգչունի եւ թայչիի ֆեդերացիայում ընդգրկել ավելի շատ մարզիկներ, նրանց հասցնել միջազգային մրցաշարերին մասնակցելու համար պահանջվող մակարդակի եւ Արցախում վինգչունի մրցաշարեր անցկացնել, իսկ լավագույն արդյունքներ ցուցաբերող մարզիկները հնարավորություն կունենան նաեւ միջազգային ռինգ դուրս գալ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ԼԻՆԻ ՄԱՆԿԱՆ ԽԱՂԱՂ ՔՈՒՆ...

Մարտունու շրջանի Սոսի մանկապարտեզ մեր չպայմանավորված այցը համընկել էր սաների ետճաշյա քնի ժամին: Այնպես որ, երեխաներին ոչ խաղալիս տեսանք, ոչ պարապելիս: Բայց «тихий час»-ն այնքան խոսուն էր, որ լրիվ պատկերացում տվեց այստեղ տիրող կարգ ու կանոնի, դաստիարակության մակարդակի մասին: Մանկական գեղեցիկ մահճակալները՝ անկողնային պարագաներով, հուշում էին, որ այստեղ ստեղծված են հարմարավետ պայմաններ փոքրիկների համար, իսկ յուրաքանչյուր մահճակալի առջև աթոռակին երեխաների՝ գեղեցիկ դարսած հագուստները դաստիարակների մայրական խնամքի մասին:

Խաղաղ քուն մաղթել՝ նշանակում է խաղաղություն, անդորր ցանկանալ: Երբ տեսնում ես խաղաղ քնած մանկան, ակամայից հոգիդ պարուրում է հանգստության երանավետ զգացումը: Քաղցր քուն, անուշ երազներ ունենալը յուրաքանչյուր բանական մարդու բնական պահանջն է: Մեծն Թումանյանը սա ձևակերպել է իրեն բնորոշ հանճարեղությամբ.

Լինե՞ր հեռու մի անկյուն,
Լինե՞ր մանկան արդար քուն,
Երազի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

Այսօր, ցավոք, մեր ժողովուրդը զրկված է հոգեկան հանգստությունից:

Սակայն այսպիսի տեսարանները, որոնց ականատես եղանք Սոսի մանկապարտեզում, և համոզված ենք, ուրիշ տեղերում էլ կլինեն, ակամայից մեզ կտրում են դառն իրականությունից:

Երեխաներից միայն մեկը՝ երկուսուկես տարեկան Մարկը չէր քնած: Պատճառն այն էր, որ ընդամենը երկու օր էր, ինչ հաճախում էր մանկապարտեզ և դեռ չէր հարմարվել: Դաստիարակ ընկեր Մելինեն և մյուս աշխատողները նրան գրկած էին պահում:

Սոսի մանկապարտեզը բարեհաջող է դուրս եկել վերջին պատերազմից: Տնօրեն Նախշուն Ստեփանյանը պատմեց, որ արկն ընկել է մանկապարտեզի բակը, բայց բարեբախտաբար վնաս չի տվել: Մանկապարտեզի շենքը նոր է, «Համահայկական» հիմնադրամի միջոցներով կառուցվել և կահավորվել է 2015 թվականին: Նախատեսված է 60 երեխայի համար: Մինչև պատերազմը հաճախում էր 34, իսկ հիմա՝ 29 երեխա: 12 աշխատողներով ոչ լրիվ հաստիքով 1-ին և 2-րդ հերթով

համերաշխ աշխատելով՝ ապահովում են մանկապարտեզի բնականոն գործունեությունը: Ծնողներն էլ հարկ եղած դեպքում աջակցում են: Այսպես, պատերազմից հետո, երբ հունվարի 8-ին մանկապարտեզը բացվեց, քանի որ ճաշը էլեկտրական հոսանքով է պատրաստվում (գազօջախ մանկապարտեզի ներսում չի թույլատրվում վառել, պետք է կից շինություն լինի, որը չունի), և լինում են անջատումներ, ծնողները ձեռք են բերել գազի բալոն, որպեսզի երեխաների տաք ճաշը միշտ ապահովված լինի: Հունվարի 28-ին Հայկական բանակի օրվա առթիվ ծնողական ժողով են արել և որոշել, որ միջոցառում անցկացնեն եթե ոչ նախորդ տարիների պես մեծ հանդեսով, բայց նշեն Բանակի օրը և այն գաղափարը դնեն, որ մեր զինվորը չի պարտվել, իր պարտքը կատարել է: Եվ շատ անակնկալ էր, որ այդ օրը բոլոր երեխաները եկել էին զինվորական հագուստով, չնայած այդ մասին տնօրինության կողմից խոսք չէր եղել:

Ինչ մնում է սննդամթերքին, տնօրենը հավաստիացրեց, որ ամեն ինչ արվում է օրենքին համաձայն: Մթերքները ձեռք են բերում գյուղի խանութից, որի մատակարարը՝ Գեղամ Գասպարյանը, Սոս-Ստեփանակերտ ավտոբուսի վարորդն է, որն ամեն օր թարմ մթերք է հասցնում:

Օգտվելով առիթից՝ մենք էլ մեր երախտագիտությունն ենք հայտնում Գեղամ Գասպարյանին, որը պատրաստակամորեն «Լուսարար» թերթը հասցնում է Սոս:

ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵՆՔ ՆԱԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԵՐՈՎ

Զատկի տոնը, որը նշեցինք փետրվարի 4-ին, շարունակվում է: Ըստ Հայ եկեղեցու, այն տևում է հիսուն օր: Պատերազմական ծանր հետևանքներ տարած մեր ժողովրդի համար Հարության տոնը առանձնակի խորհուրդ ունի:

Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզում մի ամբողջ օր նվիրված էր քրիստոնեական ամենամեծ տոնին: Առավոտվանից այստեղ աշխույժ եռուզեռ էր: Ժամը 8-ից արդեն, երբ սկսվում է փոքրիկների ընդունումը, մանկապարտեզի բակը ներկայացնում էր ազգային ճոխ տոնահանդես: Ծաղկած ծառերի ներքո երկար ձգվող՝ մանկապարտեզի 12 խմբերի անուններով նրանց դաստիարակների ու բազմամասնագիտական խմբի պատրաստած տոնական սեղանն էր՝ զատկական ուտեստներով, ձեռքի աշխատանքներով, գեղեցիկ նկարներով: Արցախյան տարազով կանայք մի տեղ արկանք էին աղում, խնոցի հարում, թոնրահացի և ժենգյալով հացի պատրաստություն տեսնում: Ղարաբաղյան այան օրինանքի խոսքով դիմավորում էր երեխաներին և նրանց ուղեկցող ծնողներին, որոնք, չնայած աշխատանքի շտապելուն, առիթը բաց չթողեցին նկարահանվել այդ գեղեցիկ պատկերների մոտ:

Մանկապարտեզի բակում աշխատանքային ողջ օրն այս եռուզեռը շարունակվում էր, իսկ ներսում փոքրիկների մի խումբ դաստիարակի գլխավորությամբ հանդես էր պատրաստել: Փոքրիկ հրեշտակներն էլ իրենց երգ ու պարով բարձրացրին ներկաների տրամադրությունը: «Նպատակ ենք դրել ավանդական տոների միջոցով պահպանել մեր ինքնությունը: Մանկավարժական փորձի ընթացքում համոզվել ենք, որ հայ երեխային ազգային ոգով դաստիարակելը կրթությունը մայրենի լեզվով իրագործելը չէ միայն: Ուսումնադաստիարակչական գործընթացը պետք է կազմակերպենք այնպես, որ երեխաները ճանաչեն և յուրացնեն ազգային տարազները, խաղերը, պարերը, ավանդույթները, սովորույթներն ու ծեսերը»,- ասաց մանկապարտեզի տնօրեն Ռենա Բարխուդարյանը՝ հավելելով, որ նպատակներից մեկն էլ ընկճախտի հաղթահարումն է, մանկապարտեզի աշխատողների, երեխաների ու նրանց ծնողների տրամադրության բարձրացումը, որը կօգնի դուրս գալ պատերազմի պատճառած ցնցումներից: Նշենք, որ այստեղ հաճախում է 485 երեխա և աշխատում 70 մարդ:

Զատկի հանդեսին ներկա՝ ԱՀ ԿԳՄՍՆ և քաղաքապետարանի կրթության բաժնի պատասխանատուները բարձր գնահատեցին Արցախի ամենամեծ նախակրթարանի կոլեկտիվ ջանքերով պատրաստած ազգային հանդեսը:

Բոլոր խմբերը ներկայացրել էին շատ գեղեցիկ ու յուրահատուկ աշխատանքներ և մանկապարտեզի տնօրինության կողմից արժանացան շնորհակալագրի, հուշանվերների, գրքերի:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ. «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ»

Այս խորագրով ապրիլի 9-ին Ստեփանակերտի մանկապատանեական ստեղծագործական կենտրոնը կազմակերպել էր ցուցահանդես: Ավելի քան 1000 աշակերտ ունեցող մշակութային կենտրոնի ընդարձակ ցուցասրահում տեղ էին գտել նրա բազմաթիվ խմբակների երեխաների նկարչական և ձեռքի աշխատանքներ, իսկ սաների մի մասի համար ցուցահանդեսը նաև ստեղծագործական պահ էր:

Երեխաների աչքերով խաղաղությունը արցախյան ավանդական ընտանիքն է, մեր պատմամշակութային հուշարձանները, Տատն ու Պապը, սահմանին կանգնած հայ զինվորը, գյուղերում ու քաղաքներում աշխատանքային եռուզեռը...

Բացման խոսքով հանդես եկավ ՄՊՍԿ հոգաբարձուների խորհրդի նախագահ Լյուդմիլա Բարսեղյանը, որը նշեց, որ խաղաղության գինը արցախցիները լավ գիտեն: Իսկ մատաղ սերունդը պատերազմի մասին գիտի ոչ միայն ֆիլմերից ու գրքերից, ոչ միայն լսել է Արցախյան պատերազմի մասնակից պապերից ու հայրերից, այլև տեսել է իր աչքերով, զգացել իր մաշկի վրա և ամենաշատն է ուզում, որ այն այլևս չկրկնվի, որ բաղձալի խաղաղությունը հարատև լինի:

ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանը, շնորհավորելով ՄՊՍԿ կոլեկտիվին պատերազմից հետո առաջին ցուցահանդեսի առթիվ, ասաց, որ աշխարհում արվեստի լեզուն ամենաընկերականն է, ամենահասկանալին, ամենահետաքրքիրը. «Արվեստի միջոցով մենք կարող ենք հատել բոլոր սահմանները: Նկարների մեծ մասում պատկերված են խաղաղապահները: Ես հավատում եմ, որ կգա ժամանակ, երբ մենք ինքներս կկարողանանք պաշտպանել մեր երկրի սահմանները, ինքներս կլինենք մեր անվտանգության երաշխավորը: Ձեր ստեղծագործական կարողություններով դուք ոչ միայն գեղեցկացնում եք ձեր հոգեկանը, գեղեցկանում է մեր հասարակությունը, այլև մենք տեսանելի, գնահատելի և ազդեցիկ կարող ենք դառնալ համաշխարհային մշակույթում»: Նախարարը շնորհակալություն հայտնեց մանկավարժներին, որ կարճ ժամանակաընթացքում կարողացել են բնականոն ռիթմի մեջ դնել երեխաներին ու հասնել այդպիսի հաջողությունների:

Իրենց երախտագիտությունը հայտնեցին նաև ՄՊՍԿ մանկավարժներից, պատանի նկարիչներից:

Արցախում տեղակայված ռուսական խաղաղապահ զորակայանի ներկայացուցիչ՝ փոխգնդապետ Իգոր Յակուշևը խոստովանեց, որ, շփվելով կենտրոնի հետ, հանգիստ կարող եք զբաղվել արվեստի տարբեր ճյուղերով, մենք կպաշտպանենք ձեզ»,- վստահեցրեց նա:

Ցուցահանդեսին նաև մեծերը հանդես եկան իրենց արվեստով: Երգչուհի Էվելինա Ստեփանյանը Իգոր Յակուշևի նվագակցությամբ կատարեց հայկական «Բալենի» երգը, ապա՝ ռուսական «Մերձմոսկովյան գիշերներ»-ը, որին ձայնակցեցին ներկաները:

Ցուցահանդեսի վերջում նախապես ընտրված ժյուրին որոշեց լավագույն նկարները: Հանձնախմբի նախագահ, քանդակագործ Յուրի Հովհաննիսյանն ասաց, որ ներկայացված շուրջ 150 աշխատանքներից դժվար էր ընտրել լավագույնները, այնուամենայնիվ, ինն առանձնացրել են որպես հաղթող: Դրանց հեղինակները նախարար Լ. Ղարախանյանի և փոխգնդապետ Ի. Յակուշևի կողմից պարգևատրվեցին դիպլոմներով ու նվերներով:

ՀԱՄԵՐԳ ԳԱՐՆԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ

Մայրական թեմաներով երգերն ու բանաստեղծությունները բոլոր ժամանակներում հուզել են մարդկանց: Մեր օրերում դա հասել է գերադրական աստիճանի. չէ՞ որ Արցախյան վերջին պատերազմում ավելի քան 5 հազար մայրեր կորցրին իրենց զավակներին: Դա միայն նրանց վիշտը չէ, ամբողջ ազգի ցավն է, ամեն հայի մորմոքը:

Ստեփանակերտի Հակոբ Գյուրջյանի անվան արվեստի դպրոցը ապրիլի 9-ին հանդես եկավ համերգով: Դպրոցի տնօրեն Էվելինա Լալայանը համերգի սկզբում շնորհավորեց Մայրության և գեղեցկության օրվա առթիվ՝ մաղթելով բոլորին սեր, խաղաղ երկինք, որ մայրերի աչքերում լինեն միայն երջանկության արցունքներ: «Մեր քաջորդիների արյան գնով ենք կարողացել նորից հավաքվել այս դահլիճում». տնօրենի խոսքին հետևեց ներկաների՝ մեկ րոպե լռությամբ հոտնկայս հարգանքի տուրքը նահատակների և վերջերս կյանքից հեռացած՝ արվեստի դպրոցի երախտավոր տնօրեն Էլմիրա Կարապետյանի հիշատակին:

Բեմն այնուհետև տրամադրվեց երեխաներին: Հաղորդավարը՝ դպրոցի դասատու Հասմիկ Միխայլովան, ամեն համարից առաջ մեծարման խոսք էր հղում մայրերին և առհասարակ կանանց, որ լինեն միշտ սիրված, զավակներով շրջապատված, խաղաղ երկնքի տակ իրենց մայրական առաքելությունը կատարելիս: Իսկ երեխաները հայերեն, ռուսերեն, անգամ անգլերեն և ֆրանսերեն լեզուներով երգերի կատարումներով, պարերով ու նվագով իրենց սերն արտահայտեցին առ մայրեր:

Համերգի վերջում դպրոցի տնօրենը տեղեկացրեց մի անակնկալի մասին: Փետրվար ամսին ազգային երգի և երգարանների առցանց մրցույթ-փառատոն է անցկացվել Երևանում, որին արվեստի դպրոցը ներկայացրել էր Սուրեն Թունյանին, որն, ի դեպ, շատ ակտիվ էր համերգի ժամանակ: Նա գրավել է 5-րդ տեղը և արժանացել պատվոգրի: Պատանի երգչի հաջողությունը դահլիճը ողջունեց ծափերով:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՐԵՆ ՏԱՆԵԼ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԳՈՌ ՀԱՐՎԱԾՆԵՐԸ

Օրեր առաջ Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում ներկա եղա գրական-գեղարվեստական մի միջոցառման, որը կազմակերպել էր պարարվեստի քոլեջը: Այն նվիրված էր ռուս նշանավոր երգիչ, բանաստեղծ, երգահան ու դերասան Վլադիմիր Վիսոցկուն: Բեմի վարագույրին կիթառով նրա ուրվապատկերն էր՝ մի կողմում ռուսերեն գրված «Վ. Վիսոցկի-1938-1980», մյուս կողմում՝ «Նա այնպե՞ս մենակ էր»: «Ինչո՞ւ հենց նրան է նվիրված միջոցառումը, հատկապես որ նրա ծննդյան տարեդարձը կամ մահվան տարելիցը չէ»,- զարմանքով մտածում էի ես: Հանդիսականների մեջ, ի դեպ, ռուս խաղաղապահներ էլ կային:

Միջոցառումը ողջույնի խոսքով բացեց քոլեջի տնօրեն Ստելլա Զաքարյանը՝ ելույթն սկսելով հայերեն, ապա անցնելով ռուսերենի: Ասաց, որ դա իրենց հետպատերազմյան առաջին միջոցառումն է, նախատեսել էին հունվարի 25-ին՝ Վիսոցկու ծննդյան օրը կազմակերպել, բայց պատերազմից հետո քիչ ժամանակ էր անցել, և հոգեբանորեն դժվար էր բեմ բարձրանալ երգել, պարել… Այնուամենայնիվ, կյանքը շարունակվում է, և որոշեցին աստիճանաբար հունի մեջ ընկնել: Նրա հորդորով ներկաները հոտնկայս հարգեցին պատերազմում զոհված մեր նահատակների հիշատակը:

Միջոցառումը սկզբից մինչև վերջ տարվեց ռուսերենով, և պատճառը միայն օրվա հերոսը՝ Վիսոցկին չէր: Կազմակերպիչը ռուսաց լեզվի ուսուցչուհի էր՝ Սվետլանա Լալաբեկյանը: Նշենք, որ պարարվեստի քոլեջը հանրակրթական դպրոց է՝ պարի թեքումով: Ասել է թե՝ այստեղ էլ անցնում են բոլոր առարկաները, ինչպես սովորական դպրոցում: Քոլեջ ընդունվում են 5-րդ դասարանից, ովքեր նպատակ ունեն հետագայում դառնալ պարի մասնագետ: Փաստորեն Ս. Լալաբեկյանն իր առարկայական միջոցառումն էր կազմակերպել, ինչպես անում են հանրակրթական դպրոցների ուսուցիչները, այդ թվում՝ ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի մասնագետները այդ լեզուներով:

Ուսուցչուհին մինչև պատերազմն էր նպատակադրվել Վիսոցկուն նվիրված դաս-միջոցառում անցկացնել: Այն ժամանակ էլ անպայման կընդգրկեր սիրված արտիստի կենսագրական տվյալները: Կասեր, որ նա մանկությունը մոր հետ անցկացրել է տարհանման մեջ՝ Ուրալում: Պատերազմից հետո՝ հոր և հայուհի խորթ մոր հետ, որին նա շատ է սիրել և ի նշան նրա նկատմամբ մեծ հարգանքի՝ կնքվել է Հայ առաքելական եկեղեցում: Դեռևս դպրոցում խաղացել է թատերական խմբակում: Դպրոցից

հետո ընդունվել է Մոսկվայի Կույբիշևի անվան ճարտարաշինարարական ինստիտուտ, ապա փոխադրվել ՄԳԱԹ-ի ստուդիա-դպրոցի դերասանական բաժին: Երկար կյանք չի ունեցել, բայց հեղինակել է շուրջ 600 երգ և 100 բանաստեղծություն, ինչպես նաև արձակ գործեր: Շատ է սիրել հայերին, ընկերություն է արել նրանց հետ, բանաստեղծություն ունի՝ նվիրված Լ. Ենգիբարովին: 1970-ին համերգներ է տվել Հայաստանում:

Թե Վիսոցկու ստեղծագործություններից և կատարումներից որոնք կներառվեին մինչև պատերազմը նախատեսված բեմագրում, չգիտենք: Ուսուցչուհու խոսքով՝ եթե վաղն էլ առիթ լինի միջոցառում անցկացնելու, բոլորովին այլ կլինի: Իսկ այս մեկը, որ տեսանք, շատ խորհրդանշական էր:

Վիսոցկին անբաժան կիթառով ներկա էր միջոցառմանը իր անկեղծ խոստովանություններով, անարդարությունների դեմ ընդվզումով, փիլիսոփայական խոհերով: Երբ քոլեջի չորս աղջիկներ 25 հետաքրքիր փաստեր էին ներկայացնում նրա մասին, որոնցից մեկը Շեքսպիրի Համլետի դերն է, անհնար էր առանց հուզմունքի դիտել այդ տեսարանը. ավելի քան հինգ դար առաջ գրված մենախոսությունն ասես մեզ է ուղղված.

Լինե՞լ, թե չլինել, այս է խնդիրը.
Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ,
Տանել գոռ բախտի պարսաքարերը և սլաքնե՞րը,
Թե՞ զենք վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ
Եվ դիմադրելով վերջ տալ բոլորին:

Վիսոցկին բանաստեղծություններ է գրել Հայրենական մեծ պատերազմի թեմաներով: Դրանք նույնպես ասես մեր օրերի մասին են. համենայն դեպս, աղջիկների ներկայացրածներն այդպիսին էին.

Մենք չհասցրինք նույնիսկ ուշքի գալ,
Իսկ որդիները գնում են ճակատ…

* * *

Մենք դեպ քաղաքի ժխորն ենք բազմահեծ

Հետ դառնում, պարզապես տեղ չկա չքվելու,
Նվաճած լեռներից իջնում ենք մենք ներքև՝
Մեր սիրտը թողնելով լեռներում:
Նվաճած լեռներից իջնում ենք շարունակ.
Ինչ արած, աստվածներն են իջել հուսալով…
Ուրեմն վերջ տվեք վեճերին այս ունայն.
Ինքս ինձ պարզել եմ արդեն ես՝
Լեռներից լավն էլի այն լեռներն են միայն,
Որոնցում չենք եղել դեռևս…

Պարարվեստի քոլեջը չէր կարող նաև պար չցուցադրել Վիսոցկու կատարման ներքո: «Ձիեր» երգի տակ նրանց պարը զգայացունց էր:

Աշակերտների արտասանություններն ընդմիջվում էին Վիսոցկու կատարումներով: Երկու անգամ նրա ուրվապատկերը հեռացավ, և բեմում հայտնվեց «իրական» Վիսոցկին: Փակ աչքերով լսելու դեպքում չէիր կասկածի, որ նա չէ. նույն խռպոտ ձայնը, նույն ելևէջումները, նույն շիկացումը… Հետո իմացանք, որ երգողը Արամ Բաբայանն է՝ քոլեջի պարուսույցը: Սվետլանա Լալաբեկյանը պատմեց, որ իրենց գործընկերը Վիսոցկու դերում իրենց համար էլ էր հայտնություն: Ընկերական հավաքույթներում միշտ երգում էր, բայց ոչ՝ Վիսոցկի: Եվ երբ պետք է միջոցառումը կազմակերպեին, ու կիթառ էր հարկավոր, տնօրենը դիմեց նրան, և արդյունքում ունեցան այն, ինչ տեսանք:

Դահլիճը ամենաբարձր շիկացման հասավ, երբ Արամ-Վիսոցկին կատարեց «Նա երեկ չի դարձել գրոհից» երգը:

…Մեզ զոհված տղերքը չեն թողնի փորձանքում,
Ժամապահներ են ընկածները մեր…

Երգի կատարման ընթացքում բեմի վարագույրին հերթով ուրվագծվեցին մեր զոհված տղաները (հետո իմացանք, որ վերջինը քոլեջի սան Սերո Աղաբեկյանն է): Դահլիճը լռելյայն ոտքի կանգնեց ու երգի կատարման ամբողջ ընթացքում այն ունկնդրեց հոտնկայս՝ արցունքն աչքերին: Իսկ մեր Վիսոցկին երգում էր դեմքով դեպի տղաները՝ վերջին ակորդների հետ խոնարհվելով նրանց առաջ:

Ապա բեմ է ելնում ուսուցչուհի Սվետլանա Լալաբեկյանը՝ որպես միջոցառման կազմակերպիչ վերջաբանի իր խոսքն ասելու: Եվ ասում է ոչ հանրածանոթ Վալերի Ցացկիսի՝ Վիսոցկու բանաստեղծություններից վերցրած բառերով.

А что бы сказал Высоцкий,
Если б сейчас воскрес?
- Ведёте себя по-скотски,
Мне стыдно за вас с небес!
Куда подевалась Совесть?
Куда улетучилась Честь?
Осталась одна лишь помесь -
Предательство плюс лесть...

Դահլիճը հեռացավ հոգով թեթևացած ու հպարտ ոչ միայն քոլեջի աշակերտների անթերի ռուսերենի համար, այլև մեր ժողովրդի գիտակցության ու պահվածքի, որ կարողանում է ճակատագրի գոռ հարվածները տանել արժանապատվորեն:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԿԻՈԿՈՒՇԻՆ ԿԱՐԱՏԵԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 17-18-ը Արցախի «Օյամա» կիոկուշին կարատե դո ֆեդերացիան անցկացրեց հետպատերազմյան շրջանում կազմակերպված առաջին ակումբային առաջնությունը: Մրցաշարն անցկացվեց երկու փուլով: Առաջին փուլում մենամարտեցին ֆեդերացիայի 12-17 տարեկան մարզիկները՝ 52 հոգի: Երկրորդ փուլին մասնակցեցին 4-11 տարեկան մարզիկները՝ շուրջ 140 հոգի:

Առաջնության մրցավար եւ կիոկուշին կարատեի մարզիչ Արմեն Պետրոսյանը ներկայացրեց, որ պատերազմի պատճառով երեք ամիս պարապմունքներ չեն արել, բայց արդեն վերսկսել են եւ վերականգնում են թիմերը: Նշվեց, որ այս ընթացքում մարզիկների քանակն ավելացել է, քանի որ տեղահանված ընտանիքներից էլ են երեխաներ սկսել պարապել իրենց մոտ: Պատերազմի ժամանակ ֆեդերացիայի բոլոր մարզիչները մասնակցել են մարտական գործողությունների, իսկ մարզիկներից, ցավոք, կան հավերժ բացականեր:

Մարզչական կազմը համալրվել է նոր մարզչով: Զինվորական ծառայությունից վերջերս զորացրված մարզիկ եւ մարզիչ Դավիթ Ավետիսյանը մարզում է Այգեստանի թիմը, որի սաները եւս մասնակցեցին մրցույթին:

Արմեն Պետրոսյանը հայտնեց, որ այս մրցույթին մասնակցում են սկսնակ եւ միջին կարողությամբ մարզիկները: Նպատակ ունեն ստուգել մարզիկների՝ մարզաձեւին տիրապելու աստիճանը, վերհանել լավագույն մարզիկներին: Նկատի ունենալով, որ հետպատերազմյան շրջանում կազմակերպված առաջին մրցույթն է, այնուամենայնիվ, անկախ ամեն ինչից, մարզիկները լավ մարտեր արեցին: Թեժ եւ ուժեղ մարտերն անցան առանց լուրջ վնասվածքների: Մրցաշարերը միանշանակ նպաստում են մարզիկի ընդունակությունների զարգացմանը, թիմային եւ անհատական մարտական ոգու բարձրացմանը:

Միջոցառմանը ներկա էին ծնողներ, մարզիկներ, ԿԳՄՍ նախարարության սպորտի ոլորտի ներկայացուցիչներ, մարտարվեստների երկրպագուներ: Հրազենի եւ ժամանակակից զենքի այլ տեսակների գոյությունը, իհարկե, փոքր-ինչ փոխում է հասարակության վերաբերմունքը մարտավարության սկզբունքների եւ մարտարվեստների նկատմամբ: Մինչդեռ մարտարվեստները չեն կորցնում իրենց արդիականությունը: Իսկ պարբերաբար կազմակերպվող առաջնությունները լավ հնարավորություն են տալիս ոչ միայն մարզիչներին ի հայտ բերել իրենց սաների ընդունակությունները, տեխնիկական եւ ֆիզիկական կարողությունները, այլեւ մարզասեր հանրությանը՝ ականատես լինելու մարտական արվեստի ցուցադրության լավագույն օրինակների:

Մրցույթում առաջին, երկրորդ եւ երրորդ տեղեր գրաված մարզիկները պարգեւատրվեցին պատվոգրերով, մեդալներով, գավաթներով:

Ֆեդերացիայի կողմից շնորհակալագիր հանձնվեց «Ժառանգություն» հիմնադրամի տնօրեն Սերգեյ Անդրյանին մշտական աջակցության եւ առաջնությունը պատշաճ կազմակերպելու հարցում ներդրում անելու համար:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 22.04.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: